



Հաստատում եմ՝

Գիտությունների և տեխնիկայի նախարար

Ռեկտոր՝

Ն. Խ. Սարխիբեկյան

«15»

05

2018 թ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ  
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ՝

091101.00.7-«ՄՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ»

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ՝

ԲԺՇԿ-ՄՏՈՄԱՏՈԼՈԳ

Երևան 2018թ.

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագիրը /ՄԿԾ/, նախատեսված է դիմորդների, ուսանողների, ակադեմիական անձնակազմի, շահակիցների և գործատուների համար:

Այն ներկայացնում է ծրագրի հիմնական հատկանիշների համառոտ ամփոփումը՝ իր մեջ ներառելով ուսումնառության նախատեսվող արդյունքները, մանրամասն տեղեկություններ ուսուցման, դասավանդման և գնահատման մեթոդների, ուսումնառության արդյունքների և յուրաքանչյուր մոդուլի բովանդակության մասին, որն ակնկալում է ուսանողը և որին կարող է հասնել, եթե նա լիարժեքորեն օգտվում է իրեն առաջարկվող և տրամադրվող ուսումնական հնարավորություններից:

### 1. Ընդհանուր դրույթներ

- Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը՝ *091101.00.7-«Ստոմատոլոգիա»*
- Որակավորումների ազգային շրջանակի մակարդակ՝ *Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ, 7-րդ մակարդակ*
- ՄԿԾ-ի յուրացման ժամկետը՝ *5 տարի*
- Կրեդիտների քանակը՝ *300 /երեք հարյուր /*
- Շնորհվող որակավորումը՝ *Բժիշկ-ստոմատոլոգ*
- Բարձրագույն ուսումնական հաստատություն՝ *Ավանդական բժշկության համալսարան /ԱԲՀ/*
- Կրթական ծրագիրը իրականացնող ֆակուլտետ՝ *Ստոմատոլոգիական*
- Կրթական ծրագրի ուսուցման ձևը՝ *Առկա*
- Կրթական գործունեությունն իրականացվում է՝ *ՀՀ պետական լեզվով Օտարերկրացիների համար՝ անգլերեն լեզվով*
- Կրթական ծրագիրը լիցենզավորված և հավատարմագրված է՝ *Լիցենզիա - N 0002  
Հավատարմագիր - N 128*

#### 1.1. Ներածություն

ԱԲՀ-ի կողմից իրականացվող 091101.00.7 «Ստոմատոլոգիա» մասնագիտության կրթական ծրագիրը /ՄԿԾ/ իրենից ներկայացնում է փաստաթղթերի համակարգ, որոնք մշակվել և հաստատվել են համալսարանի գիտական խորհրդի կողմից 15.05.2018թ-ին /արձանագրություն N 8/՝ աշխատաշուկայի պահանջներին և ՀՀ պետական կրթական նորմերի, ՈԱՇ-ի կրթական չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև հաշվի են առնվել արտասահմանյան համանման բուհերի օրինակելի կրթական ծրագրերը:

ՄԿԾ-ն կարգավորում է՝ կրթական ծրագրի գործընթացի նպատակները, ակնկալվող արդյունքները, բովանդակությունը և դրա իրականացման պայմաններն ու տեխնոլոգիաները, շրջանավարտի պատրաստվածության որակի գնահատումը և իր մեջ ներառում է. ուսումնական պլանը, դասընթացների, դասախոսությունների և առարկաների (մոդուլներ) աշխատանքային ծրագրերը և այլ նյութեր, ինչպես նաև

ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման օրացուցային ուսումնական ժամկետները և համապատասխան կրթական տեխնոլոգիաների իրականացումն ապահովող մեթոդական նյութերը:

**1.2. 091101.00.7 –«Ստոմատոլոգիա» մասնագիտության ՄԿԾ մշակման նորմատիվային փաստաթղթեր**

ՄԿԾ մշակման նորմատիվային իրավական հիմքը կազմում են.

- «Կրթության մասին» ՀՀ օրենքը
- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը
- Մասնագիտական կրթության որակի ապահովման /ՈԱՇ/-ի կրթական չափորոշիչի պահանջները
- ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչը:

**1.3. Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր բնութագիրը**

**1.3.1. Մասնագիտական կրթական ծրագրի նպատակը /առաքելություն/**

ՄԿԾ-ի նպատակն է՝

- պատրաստել բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության ոլորտի, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ իրենց դերը գիտակցող բժիշկ-ստոմատոլոգներ, ովքեր.
  - ✓ կունենան հիմնարար և համակարգված ժամանակակից գիտելիք բուժ-ախտորոշիչ և կանխարգելիչ գործունեության վերաբերյալ,
  - ✓ ցուցաբերելով կլինիկական ճկուն մտածելակերպ, ուսումնառության ընթացքում ձեռք բերած տեսական ու գործնական գիտելիքները կկարողանան կիրառել պրակտիկ գործունեության ընթացքում,
- ստեղծել ֆունդամենտալ և պրակտիկ պայմաններ մասնագետների պատրաստման համար, հիմնվելով բժշկական կրթության միջազգային ստանդարտների, հայրենական ավանդույթների վրա, որն էլ կապահովի համալսարանի ուսանողների մրցակցելիությունը հայրենական և արտասահմանյան աշխատաշուկաներում:

ՄԿԾ-ի խնդիրն է՝

- պատրաստել այնպիսի բժիշկ-ստոմատոլոգներ, որոնք պահանջված և մրցունակ կլինեն հայրենական և միջազգային աշխատաշուկայում, կունենան գիտելիքներ և կարողություններ՝ ապահովելու շարունակական կրթություն և զարգացնելու

սեփական ներուժը՝ գիտակցելով մասնագիտական գործունեության ամբողջ պատասխանատվությունը և խորությունը:

- ստացած հիմնարար գիտելիքները և հմտությունները հիմք կհանդիսանան կլինիկական օրդինատուրայում կամ ասպիրանտուրայում հետագա կրթություն ստանալու համար:

### **1.3.2. ՄԿԾ-ի կառուցվածքը և նկարագիրը**

ՄԿԾ-ի պաշտոնական տևողությունը 5 տարի է, 250 շաբաթ, այդ թվում՝ տեսական ուսուցումը, գործնական և լաբորատոր պարապմունքները, քննաշրջանները, ուսումնաարտադրական պրակտիկաները, արձակուրդները:

Կրթական ծրագրի ծավալը 1 ուսումնական տարում կազմում է 60 կրեդիտ:

Ուսանողի ուսումնական ծանրաբեռնվածության ծավալը սահմանված է շաբաթական 45 ժամ՝ ներառյալ լսարանային /30 ժամ/ և արտալսարանային /ինքնուրույն՝ 15 ժամ/ աշխատանքները:

Ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ատեստավորման քննությունների հանձնումով: Ամփոփիչ ատեստավորմանը թույլատրվում են մասնակցել ուսումնական պլանները լիովին կատարած ուսանողները: Ամփոփիչ ատեստավորման քննությունները բարեհաջող հանձնման դեպքում շրջանավարտին շնորհվում է բժիշկ-ստոմատոլոգի որակավորում:

ԱԲՀ-ի 091101.00.7 -«Ստոմատոլոգիա» մասնագիտության ՄԿԾ-ը բաղկացած է հետևյալ կրթամասերից՝

#### **Տեսական դասընթացներ**

- I. Հումանիտար, սոցիալ-բնագիտական դասընթացներ – 27 կրեդիտ
- II. Բնագիտական, մաթեմատիկական և բժշկակենսաբանական դասընթացներ - 95 կրեդիտ
- III. Կանխարգելիչ բժշկության դասընթացներ - 13 կրեդիտ

#### **Կլինիկական և մասնագիտական դասընթացներ**

- IV. Կլինիկական և մասնագիտական դասընթացներ - Թերապևտիկ և վիրաբուժական հիվանդությունների դասընթացներ – 50 կրեդիտ

#### **Մասնագիտական դասընթացներ**

- Թերապևտիկ ստոմատոլոգիայի դասընթացներ - 33 կրեդիտ
- Վիրաբուժական ստոմատոլոգիայի դասընթացներ – 23 կրեդիտ

- Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի դասընթացներ - 21 կրեդիտ
- Մանկական հասակի ստոմատոլոգիայի դասընթացներ – 18 կրեդիտ

V. Ավանդական բժշկության դասընթացներ – 7 կրեդիտ

**Ուսումնասարտադրական պրակտիկա – 10 կրեդիտ**

**Լրացուցիչ ընտրովի դասընթացներ**

**Անփոփիչ ավարտական որակավորման քննություն** (3 կրեդիտ), որը կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է տեսական և գործնական մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգում՝ ըստ կրթական ծրագրի վերջնարդյունքների:

### **1.3.3. Դիմորդին ներկայացվող պահանջներ**

- Դիմորդը պետք է ունենա պետական նմուշի վկայական՝ միջնակարգ, միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական կրթության մասին:
- Դիմորդներին իրավունք է վերապահվում իրենց ընտրությամբ հանձնելու նշված երեք՝ «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Քիմիա» մրցութային քննություններից երկուսը և «Հայոց լեզու»՝ որպես ոչ մրցութային առարկա:
- Ընդունելությունը կատարվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

## ***2. 091101.00.7 –«Ստոմատոլոգիա» մասնագիտության ՄԿԾ-ն յուրացրած***

### ***շրջանավարտի մասնագիտական գործունեության բնութագիրը***

#### ***2.1. ՄԿԾ-ն յուրացրած շրջանավարտի մասնագիտական գործունեության շրջանակը ներառում է.***

առողջապահության ոլորտի ստանդարտներին և պահանջներին համապատասխան ստոմատոլոգիական ծառայությունների տրամադրման միջոցով բնակիչների առողջության պահպանում:

#### ***2.2. ՄԿԾ-ն յուրացրած շրջանավարտի մասնագիտական գործունեության օբյեկտներն են՝***

- ֆիզիկական անձիք /այսուհետ՝ հիվանդներ/
- բնակչությունը,

- ստոմատոլոգիական օգնության համար նախատեսվող և քաղաքացիների առողջության պահպանման պայմանների ստեղծման համար անհրաժեշտ միջոցների և տեխնոլոգիաների համախումբը:

**2.3. ՄԿԾ-ն յուրացրած շրջանավարտի մասնագիտական գործունեության տեսակները հանդիսանում են.**

- բժշկական,
- կազմակերպչական-կառավարման,
- գիտահետազոտական

**2.4. Շրջանավարտի մասնագիտական գործունեության խնդիրները**

ՄԿԾ-ն յուրացրած շրջանավարտը, պետք է լուծի մասնագիտական գործունեության հետ կապված հետևյալ խնդիրները:

- բժշկական գործունեություն
  - կանխարգելիչ և հակահամաճարակաբանական միջոցառումների միջոցով ազգաբնակչության շրջանում հիվանդությունների կանխարգելում,
  - մասնակցություն կանխարգելիչ բժշկական զննումների, դիսպանսերացման և դիսպանսեր հսկողության միջոցառումներին,
  - տարբեր սեռատարիքային խմբերի ստոմատոլոգիական հիվանդությունների, ինչպես նաև մարդկանց առողջության վրա դրանց ազդեցության վերաբերյալ ինֆորմացիայի հավաքագրում և վերլուծություն,
  - ստոմատոլոգիական հիվանդությունների և հիվանդների պաթոլոգիական դրության ախտորոշում,
  - հիվանդների սուր վիճակների ախտորոշում,
  - ժամանակավոր անաշխատունակության փորձաքննության անցկացում և մասնակցություն այլ բժշկական փորձաքննությունների,
  - ամբուլատոր և ցերեկային ստացիոնարի պայմաններում ստոմատոլոգիական օգնության տրամադրում,
  - մասնակցություն արտակարգ իրավիճակների պայմաններում առաջին բուժօգնության ցուցաբերման գործընթացին, այդ թվում մասնակցություն բժշկական տարհանմանը,
  - մասնակցություն ստոմատոլոգիական հիվանդություններով հիվանդների բժշկական վերականգնողական և առողջարանային բուժմանը,

- ազգաբնակչության, հիվանդների և նրանց ընտանիքների մոտիվացիայի ձևավորում՝ ուղղված սեփական և շրջապատի առողջության պահպանմանը և ամրապնդմանը,
- հիվանդներին՝ բուժական բնույթի հիմնական հիգիենիկ միջոցառումների ուսուցում, որը կնպաստի ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելմանը և առողջության ամրապնդմանը,
- **կազմակերպչական-կառավարման գործունեություն**
  - բժշկական հաստատություններում և նրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստոմատոլոգիական օգնության կազմակերպման հիմնական սկզբունքների կիրառում,
  - ստոմատոլոգիական բժշկական հաստատություններում հիվանդների և բուժանձնակազմի համար բարենպաստ պայմանների ապահովում,
  - բժշկական հաստատություններում բժշկական փաստաթղթերի վարում,
  - բժշկական փորձաքննության անցկացման կազմակերպում,
  - մասնակցություն հիվանդներին տրամադրվող ստոմատոլոգիական օգնության որակի գնահատմանը,
  - ինֆորմացիոն անվտանգության պահպանման հիմնական պահանջների կատարում,
- **գիտահետազոտական գործունեություն**
  - բժշկական գրականության և պաշտոնական վիճակագրությունների վերլուծություն, մասնակցություն վիճակագրական վերլուծությունների անցկացմանը և ստացված արդյունքների հանրայնացում,
  - մասնակցություն առողջապահության բնագավառում գիտահետազոտական խնդիրների լուծմանը, որոնք վերաբերում են ախտորոշմանը, բուժմանը, բժշկական վերականգնմանը և կանխարգելմանը:

### ***3. 091101.00.7 –«Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ի յուրացման արդյունքում***

#### ***ձևավորվող մասնագիտական գործունեության բնութագիրը***

ՄԿԾ-ի յուրացման արդյունքները որոշվում են շրջանավարտի կողմից ձեռք բերված որակներով, այն է՝ նրա՝ գիտելիքները, կարողությունները և անձնական որակները կիրառելու ընդունակությամբ՝ ըստ մասնագիտական գործունեության խնդիրների:



ՄԿԾ յուրացման արդյունքում շրջանավարտի մոտ պետք է ձևավորվեն ընդհանրական, ընդհանուր մասնագիտական և մասնագիտական վերջնարդյունքներ:

Շրջանավարտը, որը յուրացրել է ստոմատոլոգիայի ՄԿԾ-ն, պետք է տիրապետի հետևյալ ընդհանրական վերջնարդյունքների՝

ԸՎ	Ընդհանրական վերջնարդյունքներ
ԸՎ-1	Ունենա վերացական մտածողություն, համադրելու և վերլուծելու ունակություն հումանիտար, բնագիտական, բժշկակենսաբանական և կլինիկական գիտությունների մեթոդները մասնագիտական և սոցիալական գործունեության ընթացքում:
ԸՎ-2	Կարողանա փիլիսոփայական գիտելիքները կիրառել աշխարհայացքի ձևավորման մեջ:
ԸՎ-3	Կարողանա վերծանել հասարակության պատմական զարգացման հիմնական էտապները և օրինաչափությունները քաղաքացիական դիրքորոշման ձևավորման համար:
ԸՎ-4	Կարողանա գործել ոչ ստանդարտ իրավիճակներում, կրի սոցիալ-բարոյական պատասխանատվություն ընդունած որոշումների համար
ԸՎ-5	Պատրաստ լինի ինքնազարգացման, ինքնակրթման, ստեղծագործական կարողության կիրառմանը, հրապարակային խոսքին, քննարկումներ և բանավեճ վարելու մասնագիտական բովանդակության տեքստեր խմբագրելու:
ԸՎ-6	Կարողանա օգտագործել ֆիզիկական դաստիարակության մեթոդներն ու միջոցները՝ սոցիալական և մասնագիտական լիարժեք գործունեություն ապահովելու համար:
ԸՎ-7	Կարողանա ցուցաբերել I օգնության և պաշտպանության մեթոդներ արտակարգ իրավիճակների պայմաններում:
ԸՎ-8	Կարողանա ցուցաբերել կոլեկտիվում աշխատելու պատրաստակամություն, հանդուրժել սոցիալական, էթնիկ, դավանական և մշակութային տարբերությունները:

ՄԿԾ-ն յուրացրած շրջանավարտը պետք է տիրապետի հետևյալ ընդհանուր մասնագիտական վերջնարդյունքների՝

ԸՄՎ	Ընդհանրական մասնագիտական վերջնարդյունքներ
ԸՄՎ-1	Տեղեկատվական անվտանգության հիմնական պահանջներից ելնելով՝ կարողանա լուծել մասնագիտական գործունեության հիմնական խնդիրները՝ օգտագործելով տեղեկատվական, մատենագիտական ռեսուրսները, բժշկակենսաբանական տերմինաբանությունը, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները:
ԸՄՎ-2	Կարողանա մասնագիտական գործունեություն ծավալելիս հաղորդակցվել մայրենի և օտար լեզուներով՝ բանավոր և գրավոր:

ԸՄՎ-3	Կարողանա մասնագիտական գործունեության մեջ կիրառել բարոյահոգեբանական, դեռնտոլոգիական սկզբունքները և իրավական գիտելիքների հիմունքները:
ԸՄՎ-4	Կարողանա և պատրաստակամ լինի վերլուծել սեփական գործունեության արդյունքները՝ մասնագիտական սխալները կանխելու նպատակով:
ԸՄՎ-5	Բժշկական հիմնարկներում աշխատանքի կազմակերպում և բժշկական փաստաթղթերի վարում:
ԸՄՎ-6	Մասնագիտական խնդիրները լուծելիս կարողանա կիրառել ֆիզիկոքիմիական, մաթեմատիկական և այլ բնագիտական հիմնական հասկացություններն ու գիտելիքները:
ԸՄՎ-7	Մասնագիտական խնդիրները լուծելիս, կարողանա կիրառել բժշկական դեղամիջոցներ և այլ նյութեր, ինչպես նաև դրանց համադրությունները:
ԸՄՎ-8	Մասնագիտական խնդիրները լուծելիս կարողանա գնահատել մարդու օրգանիզմում մորֆոֆունկցիոնալ վիճակները, ֆիզիոլոգիական և ախտաբանական պրոցեսները՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները:
ԸՄՎ-9	Կարողանա ցուցաբերել առաջնային նախաբժշկական օգնություն (բժշկասանիտարական) և կազմակերպել հիվանդների խնամքը:
ԸՄՎ-10	Կարողանա կիրառել բժշկական և ստոմատոլոգիական օգնության համար նախատեսված բժշկական գործիքներ և սարքավորումներ:

ՄԿԾ-ն յուրացրած շրջանավարտը պետք է տիրապետի հետևյալ մասնագիտական վերջնարդյունքների:

*Կանխարգելիչ գործունեություն*

ՄՎ	Մասնագիտական վերջնարդյունք
ՄՎ-1	Կարողանա և պատրաստակամ լինի իրականացնել առողջության պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված համալիր միջոցառումներ՝ ներառելով առողջ ապրելակերպի ձևավորումը, հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելումը, վաղ ախտորոշումը, դրանց ծագման և զարգացման պայմանների և պատճառների հայտնաբերումը, ժառանգական հիվանդությունների գենոտիպային և ֆենոտիպային դրսևորումները, դիմաճնտային ապարատի բնածին խանգարումների գենետիկական հիմքերը, ինչպես նաև մարդու առողջության վրա ազդող շրջակա միջավայրի վնասակար ազդակների վերացումը:
ՄՎ-2	Կարողանա և պատրաստ լինի անցկացնել կանխարգելիչ բժշկական հետազոտություններ, դիսպանսերացում, և իրականացնի ստոմատոլոգիական ախտաբանությամբ հիվանդների դիսպանսեր հսկողություն:
ՄՎ-3	Կարողանա և պատրաստակամ լինի անցկացնել հակահամաճարակաբանական միջոցառումներ, բնակչության պաշտպանության կազմակերպում, հատկապես վտանգավոր վարակների օջախներում, ռադիացիոն իրավիճակի վատացման, բնական աղետների և այլ արտակարգ իրավիճակների դեպքում:
ՄՎ-4	Կարողանա անցկացնել ստոմատոլոգիական հիվանդությունների տեղեկատվական բժշկավիճակագրական վերլուծություն՝ սոցիալ-հիգիենիկ տեսանկյունից:

*Ախտորոշիչ գործունեություն*

ՄՎ-5	Կարողանա լսել և վերլուծել հիվանդի գանգատները, անամնեզի տվյալները, զննման, լաբորատոր, գործիքային, ախտաբանաանատոմիական և այլ հետազոտությունների արդյունքները՝ ստոմատոլոգիական հիվանդությունների հայտնաբերման կամ ժխտման նպատակով:
ՄՎ-6	Կարողանա ախտորոշել ստոմատոլոգիական հիվանդությունների և խնդիրների նոզոլոգիաները, միջազգային ստատիստիկ դասակարգմանը համապատասխան հիմնական ախտաբանական վիճակները, հիվանդությունների ախտանիշներն ու համախտանիշները:
ՄՎ-7	Կարողանա անցկացնել ժամանակավոր անաշխատունակության փորձաքննություն, մասնակցել բժշկասոցիալական փորձաքննությանը և արձանագրել մարդու կենսաբանական մահվան փաստը:

*Բուժական գործունեություն*

ՄՎ-8	Կարողանա որոշել տարբեր ստոմատոլոգիական հիվանդությունների նոզոլոգիաներով հիվանդների վարման տակտիկան:
ՄՎ-9	Կարողանա վարել տարբեր տարիքային խմբերի ստոմատոլոգիական հիվանդությունների բուժումը ամբուլատոր պայմաններում և ստացիոնարում:
ՄՎ-10	Կարողանա ցուցաբերել բժշկական օգնություն արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև մասնակցել բժշկական տարհանմանը:

*Վերականգնողական գործունեություն*

ՄՎ-11	Կարողանա որոշել բնական բուժիչ ազդակների, դեղանյութերի, ոչ դեղորայքային թերապիայի և բուժման այլ մեթոդների կիրառումը բժշկական վերականգնողական և առողջարանային բուժման կարիք ունեցող ստոմատոլոգիական հիվանդների մոտ:
-------	---

*Հոգեբանամանկավարժական գործունեություն*

ՄՎ-12	Կարողանա ուսուցանել ազգաբնակչությանն առողջացման բնույթի հիմնական հիգիենիկ միջոցառումները, հիմնական ֆիզիոլոգիական ցուցանիշների ինքնահսկողության հմտությունները, որոնք նպաստում են առողջության պահպանմանն ու ամրապնդմանը, ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելմանը:
ՄՎ-13	Կարողանա ծավալել լուսավորչական գործունեություն՝ առողջ կենսակերպ վարելու հմտություններով և ռիսկի ազդակները վերացնելու նպատակով:

*Կազմակերպչակառավարական գործունեություն*

ՄՎ-14	Կարողանա կիրառել ազգաբնակչությանն առողջության պահպանման կազմակերպման և կառավարման հիմնական սկզբունքները բժշկական կազմակերպություններում և նրանց կառուցվածքային ստորաբաժանումներում:
ՄՎ-15	Կարողանա բժշկավիճակագրական ցուցանիշներից ելնելով մասնակցել ստոմատոլոգիական օգնության ցուցաբերման որակի գնահատմանը:

*Գիտահետազոտական գործունեություն*

ՄՎ-16	Կարողանա ապացուցողական բժշկության հիման վրա վերլուծել և հանրությանը ներկայացնել բժշկական տեղեկատվություն, հետազոտության թեմայի վերաբերյալ ազգային և արտասահմանյան փորձը:
ՄՎ-17	Կարողանա մասնակցել գիտական հետազոտությունների անցկացմանը:
ՄՎ-18	Կարողանա մասնակցել ազգաբնակչությանն առողջության պահպանմանն ուղղված նոր մեթոդների ներդրմանը:

**4.191101.00.7 –«Ստոմատոլոգիա» մասնագիտության ՄԿԾ-ի իրականացման ժամանակ ուսումնական գործընթացի բովանդակությունը և կազմակերպումը կանոնավորող փաստաթղթեր**

ՄԿԾ-ն իրենից ներկայացնում է փաստաթղթերի համակարգ, որը թարմացվում է՝ հաշվի առնելով առողջապահության, գիտության, մշակույթի, տնտեսական, տեխնիկայի, տեխնոլոգիաների և սոցիալական ոլորտները:

Մասնագիտական կրթական ծրագրի բովանդակությունը, կրթական գործընթացի կազմակերպումը և իրականացումը ներկայացնող փաստաթղթեր.

- 4.1. Ըստ առարկաների ձևավորվող վերջնարդյունքներ
- 4.2. Ուսումնական պլան
- 4.3. Տարեկան օրացուցային ուսումնական գրաֆիկ
- 4.4. Առարկաների աշխատանքային ծրագրեր
- 4.5. Ուսումնաարտադրական պրակտիկաների ծրագրեր:

ՄԿԾ-ի իրականացման ժամանակ նախատեսվում են ուսումնաարտադրական պրակտիկաների հետևյալ տեսակները՝

▪ Բուժքրոջ օգնական	2 կրեդիտ	2 շաբաթ	II կուրս	4-րդ կիսամյակ
▪ Բժիշկ-ստոմատոլոգի /թերապևտ/ օգնական	2 կրեդիտ	2 շաբաթ	III կուրս	6- րդ կիսամյակ
▪ Բժիշկ-ստոմատոլոգի /վիրաբույժ/ օգնական	2 կրեդիտ	2 շաբաթ	IV կուրս	8- րդ կիսամյակ
▪ Բժիշկ-ստոմատոլոգի /օրթոպեդ/ օգնական	2 կրեդիտ	2 շաբաթ	IV կուրս	8- րդ կիսամյակ
▪ Մանկական բժիշկ ստոմատոլոգի օգնական	2 կրեդիտ	2 շաբաթ	V կուրս	9- րդ կիսամյակ

Ուսումնաարտադրական պրակտիկան անցկացվում է համապատասխան կլինիկաներում՝ հերթապահությունների ձևով կամ ցիկլերով, ինչպես նաև համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում:

- 5.6. Պետական ամփոփիչ ատեստավորում:

Սա իր մեջ ներառում է պետական քննությունների նախապատրաստումը և հանձնումը:

Ամփոփիչ ատեստավորման պետական քննություններ՝

- 1. Թերապևտիկ ստոմատոլոգիա
- 2. Վիրաբուժական ստոմատոլոգիա
- 3. Օրթոպեդիկ ստոմատոլոգիա
- 4. Մանկական հասակի ստոմատոլոգիա, Օրթոդոնտիա

## **5. Ուսուցման և դասավանդման մոտեցումներ**

Դասավանդումը և ուսուցումն իրականացվում է խմբային ձևաչափով, իսկ սեմինար, գործնական աշխատանքները և պրակտիկան ներառում են ձևավորված փոքրաթիվ խմբեր: Դասավանդման մեթոդները խրախուսում են ուսանողակենտրոն մոտեցում ուսուցման բոլոր փուլերում՝ խրախուսելով ուսանողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների համաչափ աճը, մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման հարցում վերջինիս ինքնուրույնությունը, ինչպես նաև անհատական վերլուծական ունակությունները և քննադատական մտածողությունը: Ուսուցման և դասավանդման մոտեցումներն ապահովում են գիտելիքների աստիճանական ավանդում՝ ըստ բարդության, ինչպես նաև հմտությունների և կարողությունների անընդմեջ զարգացում՝ ըստ մասնագիտական կայացման հիմնական պահանջների:

Դասավանդումն իր մեջ ներառում է դասախոսություններ, սեմինարներ, գործնական /անհատ/ պարապմունքներ, խորհրդատվություն և գործնական դասընթացներ:

*Դասախոսություններ* – ընդլայնված և համահունչ փաստերի հաջորդականության ներկայացման հնարավորություն,

*Սեմինարներ* – խմբային և անհատական ստեղծագործականի, քննարկումների և անդրադարձի թողարկում, քննադատական մտածողության զարգացում,

*Գործնական պարապմունքներ* – փորձարարության և թեմայի, փաստաթղթերի և նյութերի վերլուծության և քննարկման հնարավորություն,

*Աջակցվող ինքնուրույն ուսում՝ ընթացիկ նյութերի օգտագործմամբ* - անհատական հետազոտության և զարգացման աջակցում,

*Անհատական խորհրդատվություն* - Ինքնուրույն ուսման ավելի ընդլայնված, խոր վերլուծության և աջակցության հնարավորության տրամադրում:

## **6. ՄԿԾ-ի յուրացման որակի գնահատման չափանիշները և մեթոդները:**

«Ստոմատոլոգի» մասնագիտության ՄԿԾ-ի շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդաբանությունը հիմնվում է ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների օբյեկտիվության և չափելիության վրա՝ փաստող, ուղղորդող և խրախուսող գործառնություններով: Գնահատվում են ուսանողի՝ գիտելիքը, ունակությունները, կարողությունները, ինքնուրույնությունը և ակտիվությունը: Ուսանողի անհատական մասնագիտական աճը օբյեկտիվ դիտարկելու նպատակով

գնահատման կարգը դիտարկում է նախնական /սկզբնական/ վիճակը և վերջնական /ելքային/ արդյունքը:

Դասընթացների գնահատման մեթոդներից են՝

- գրավոր թեստային, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, բանավոր հարցումներ և հարցազրույցներ,

- գնահատման ընթացքում կիրառվում է տառային և վարկանիշային գնահատում /100 միավոր/, համաձայն յուրաքանչյուր առարկայի գնահատման համար ընտրված բաղադրիչների:

Գնահատման մանրամասները տես՝ «ԱԲՀ ուսանողների գիտելիքների գնահատման» կարգում:

Սովորողների յուրացման որակի գնահատումը ներառում է առաջադիմության միջանկյալ և պետական ամփոփիչ ատեստավորման ընթացիկ հսկողություն:

Գնահատման համակարգերի միջոցներն ու տեխնոլոգիաները տրվում է յուրաքանչյուր առարկայի աշխատանքային ծրագրերում՝ ստուգարքների և քննությունների ձևով:

Գնահատման համակարգի հիմնական միջոցները ներառում են ստուգողական հարցեր, թեստային հարցեր, իրավիճակային խնդիրներ, ռեֆերատների թեմաներ և հսկողության այլ միջոցներ, որոնք թույլ են տալիս գնահատել սովորողի ձևավորված կարողության աստիճանը: Ուսման ընթացքում օգտագործվում են հսկողության հետևյալ տեսակները՝

- Բանավոր հարցում
- Գրավոր աշխատանքներ

Առաջադիմության ընթացիկ հսկողության տեսակներից յուրաքանչյուրն առանձնանում է ըստ կարողությունների հայտնաբերման եղանակի՝

- Դասախոսի և ուսանողի զրույցի ընթացքում
- Գրավոր նյութերի ստեղծման և ստուգման ընթացքում

Բանավոր հարցումը թույլ է տալիս գնահատել ուսանողի մտահորիզոնն ու գիտելիքները, պատասխանը տրամաբանորեն կառուցելու ունակությունը, բանավոր խոսքի տիրապետմանը և այլ հմտություններ: Գրավոր պատասխանները թույլ են տալիս դասախոսին տնտեսել ժամանակը, ստուգել գնահատման հիմնավորումը և փոքրացնել սուբյեկտիվ մոտեցման աստիճանը՝ հիմնվելով ուսանողի անհատական ընդունակությունների վրա:

Հսկողության ամեն տեսակն իրականացվում է որոշակի ձևերի օգնությամբ, որոնք կարող են նույնը լինել մի քանի տեսակ հսկողության համար, օրինակ՝ բանավոր և գրավոր քննություն, ինչպես նաև սպեցիֆիկ: Համապատասխանաբար, հսկողության որոշ ձևերի շրջանակներում կարող են համադրվել դրա մի քանի տեսակները (օր.՝ առարկայից քննությունը կարող է ներառել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր փորձություն): Հսկողության ձևերն են՝ ռեֆերատ, թեստ, ստուգողական աշխատանք, հարցում, ստուգարք, քննություն:

- Սովորողները պետական ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են ուսումնական պլանով նախատեսված մասնագիտական ծրագրի առարկաների ծավալային ուսումնասիրությունից հետո:
- Պետական ատեստավորման միջառարկայական ամփոփիչ քննությունը իրականացվում է փուլերով և ներառում է հետևյալ պարտադիր ատեստավորման քննությունները.
  - գործնական հմտությունների յուրացման մակարդակի ստուգում,
  - տեսական պատրաստվածության մակարդակի ստուգում՝ թեստային քննության միջոցով,
  - բանավոր քննություն՝ կոնկրետ մասնագիտական խնդիրներ լուծելու հմտությունների գնահատում:

Ավարտական ամփոփիչ ատեստավորումը հաջող հանձնած սովորողներին տրվում է դիպլոմ՝ մասնագիտացումն ավարտելու մասին: Այն ուսանողները, որոնք անբավարար են ստացել ատեստավորումից կամ թերի են թողել ծրագիրը, ստանում են տեղեկանք՝ համալսարանի կողմից սահմանված նմուշով:

## ***7. ՄԿԾ-ի իրականացման պայմանները***

### ***7.1. Մասնագետի պատրաստման կադրային ապահովում***

Մասնագետի պատրաստման ՄԿԾ իրականացումը ապահովվում է գիտամանկավարժական կադրերի կողմից, որոնք, որպես կանոն, ունեն հիմնական կրթություն, որն համապատասխանում է դասավանդվող առարկայի պրոֆիլին, և համակարգված զբաղվում են գիտական և (կամ) գիտամեթոդական գործունեությամբ:



Գիտական կոչում և (կամ) գիտական աստիճան ունեցող դասախոսների մասնաբաժինը պետք է կազմի տվյալ ՄԿԾ ծրագրով ուսումնական գործընթացն ապահովող դասավանդողների ընդհանուր թվի ոչ պակաս, քան 50 տոկոսը:

Մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական գործընթացն ապահովող դասախոսներն ունեն հիմնական կրթություն և առնվազն 52 տոկոսն ունեն դասավանդվող առարկայի պրոֆիլին համապատասխան գիտական աստիճաններ կամ գիտական կոչումներ:

Մասնագիտական տեսական և գործնական ուսուցման բովանդակության ընդհանուր կառավարման մեջ կարող է ներգրավվել համապատասխան մասնագիտական ոլորտի բարձր որակավորում ունեցող մասնագետը:

### ***7.2. Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական և տեղեկատվական ապահովում***

Մասնագետի պատրաստման ՄԿԾ-ն ապահովվում է ԸԿԾ բոլոր ուսումնական դասընթացների առարկաների (մոդուլների) համար նախատեսված ուսումնամեթոդական փաստաթղթերով և նյութերով:

Ուսանողների արտալսարանային աշխատանքներն ունեն մեթոդական աջակցություն և դրանց կատարման համար անհրաժեշտ ժամանակի հիմնավորում:

Յուրաքանչյուր ուսանողն ունի հասանելիություն էլեկտրոնային գրադարանային համակարգին, որը պարունակում է ուսումնասիրվող հիմնական առարկաների հետ կապված հրապարակումները:

### ***7.3. Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովում***

Մասնագետի պատրաստման ՄԿԾ իրականացնող ԱԲՀ-ն ունի նյութատեխնիկական անհրաժեշտ հենք, որը ապահովում է ուսանողների բոլոր տեսակի՝ առարկայական և միջառարկայական ուսուցման, լաբորատոր, գործնական և գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, որոնք նախատեսված են բուհի ուսումնական պլանով և համապատասխանում են գործող սանիտարական և հակահրդեհային կանոնակարգերին ու նորմերին:

Մասնագետի պատրաստման ՄԿԾ իրականացման համար Համալսարանն ունի հետևյալ նյութատեխնիկական ապահովումը:

Բուհում օգտագործվում են էլեկտրոնային նյութեր և ուսումնական պրոցեսի համար ունի համացանցին միացված առնվազն 18 համակարգիչ: Ուսանողներն ուսուցման ընթացքում ապահովված են համակարգչային լսարաններով:

***8. Համալսարանի ուսանողների ընդհանուր կրթական կարողությունների զարգացումն ապահովող սոցիալ-մշակութային միջավայրի բնութագիրը:***

Դաստիարակչական աշխատանքի կազմակերպումը արտացոլված են Համալսարանի կանոնակարգերում և կարգերում, համալսարանի դաստիարակչական աշխատանքի պլաններում, ամբիոնների և դասախոսների տարեկան աշխատանքային պլաններում:

Դաստիարակչական աշխատանքի ներբուհական ներքին ակտեր են հանդիսանում հրամանները, կանոնակարգերը, ծրագրերը, հրահանգները, ծառայողական գրությունները և այլ փաստաթղթերը, որոնք կարգավորում են դաստիարակչական գործունեությունը:

Դաստիարակչական աշխատանքի պլանը ներառում է ավանդական միջոցառումներ՝ հաշվի առնելով ուսանողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, երիտասարդական քաղաքականության առաջնահերթությունները, երկրի և բուհի պատմական հիշարժան տարեթվերը, նախատեսում է մի շարք միջոցառումներ՝ ուղղված ուսանողների քաղաքացիական և հայրենասիրական, մշակութային-բարոյական, մասնագիտական-աշխատանքային դաստիարակությանը, մանագիտական կողմնորոշմանը, գիտամեթոդական ապահովմանը, ուսանողների սոցիալական պաշտպանությանը, դաստիարակչական աշխատանքի նյութատեխնիկական բազայի բարելավմանը:

Զգալի աշխատանք իրականացնում է նաև ուսանողական խորհուրդը:

Դաստիարակչական աշխատանքի իրականացման ընթացքում բուհի աշխատակիցները օգտագործում են տարբեր աշխատանքներ՝ անհատական աշխատանք ուսանողների հետ, ուսանողական գիտական ընկերության գործունեություն, մասնագիտական ծրագրերի և նախագծերի իրականացում, նորարարական գործունեություն, համագործակցություն սոցիալական գործընկերների հետ՝ քաղաքային, մարզային և միջտարածաշրջանային մակարդակներում:

Դաստիարակչական նպատակներով Համալսարանում լայնորեն օգտագործվում են ուսուցման գործընթացի հնարավորությունները: Մասնավորապես, հումանիտար

առարկաների աշխատանքային ուսումնական ծրագրերի մեջ ներառված են բարոյական, մարդասիրական և հայրենասիրական դաստիարակության, ինչպես նաև հոգեբանության, մշակութաբանության, հայոց լեզվի և խոսքի մշակույթի վերաբերյալ հարցեր: Ուսումնական ծրագրերում առկա է արտահայտված մշակութաբանական բաղադրիչ: Բնագիտական և կլինիկական ցիկլերի առարկաների ուսումնասիրության ընթացքում լայնորեն նշվում են նաև հայրենական գիտնականների ձեռքբերումները:

Ուսանողների ֆիզիկական դաստիարակությունն ուղղված է առողջ ապրելակերպի ձևավորմանը, մասնակցություն տարբեր մակարդակների (մարզային կամ հանրապետական) սպորտային մրցույթներին և այլն:

Համալսարանն ունի բավականին արդյունավետ կազմակերպչական կառուցվածք, որն ապահովում է շրջանավարտների մոտ ընդհանուր մշակութային (սոցիալական և անհատական) որակների զարգացումը: Դաստիարակչական աշխատանքի կազմակերպման և կատարելագործման մեջ կա զգալի ներուժ, ձևավորված կառուցվածքի շրջանակներում նոր հնարավորությունների որոնման հնարավորություն:

### ***9. Հետագա ուսման հնարավորությունները***

091101.00.7-«Ստոմատոլոգիա» ՄԿԾ-ն յուրացրած բժիշկ-ստոմատոլոգը պատրաստ է կրթությունը շարունակելու համապատասխան մասնագիտական ծրագրերով օրդինատուրայում և ասպիրանտուրայում /տեսական ամբիոններ/:



Հաստատում են՝

Գիտությունների Ազգային

նեկարի՝ Ն. Խ. Սարգիսյան

«15» 05 2018 թ

Հավելված

091101.00.7 –«Ստոմատոլոգիա» մասնագիտության /անընդհատ և ինտեգրացված / ՄԿԾ ըստ տարիների, կիսամյակների և դասընթացների /Առարկաների մոդուլ/

I կուրս					
Աշուն			Գարուն		
Առարկա	կիսամյակ	կրեդիտ	Առարկա	կիսամյակ	կրեդիտ
Հայոց լեզու	1	2	Հայոց լեզու	2	2
Հայոց պատմություն	1	3			
Ֆիզդաստիարակություն	1	-	Ֆիզդաստիարակություն	2	-
Լատիներեն	1	2	Լատիներեն	2	2
			Բժշկության պատմություն	2	3
Ընդհանուր հոգեբանություն	1	3			
			Բժշկական հոգեբանություն	2	2
Օտար լեզու	1	3	Օտար լեզու	2	2
			Բժշկական ֆիզիկա	2	3
Մաթեմատիկա, բժշկական ինֆորմատիկա	1	3	Մաթեմատիկա, բժշկական ինֆորմատիկա	2	2
Ընդհանուր քիմիա	1	3	Կենսաօրգանական քիմիա	2	3
Կենսաբանություն	1	5	Կենսաբանություն	2	3
Մարդու անատոմիա	1	4	Մարդու անատոմիա	2	4
			Հյուսվածաբանություն, էմբրիոլոգիա, բջջաբանություն	2	4
Բույսերի մորֆոլոգիա, ֆիզիոլոգիա	1	2			

II կուրս					
Աշուն			Գարուն		
Առարկա	կիսամյակ	կրեդիտ	կիսամյակ	կիսամյակ	կրեդիտ
			Փիլիսոփայություն	4	3
Ֆիզդաստիարակություն	3	-	Ֆիզդաստիարակություն	4	-
Կենսաքիմիա	3	4	Կենսաքիմիա, բ/ս կենսաքիմիա	4	2 2
Մարդու անատոմիա, գ/պ անատոմիա	3	2 2			
			Տոպոգրաֆիկ անատոմիա	4	2
Նորմալ ֆիզիոլոգիա	3	4	Նորմալ ֆիզիոլոգիա, դ/ճ ֆիզիոլոգիա	4	2 2
Մանրէաբանություն	3	4	Մանրէաբանություն, բ/ս մանրէաբանություն	4	2 2

Հյուսվածաբանություն, Էմբրիոլոգիա, բ/խ հյուսվածաբանություն	3	$\frac{3}{2}$			
			Ախտաբանական անատոմիա	4	3
Ֆարմակոլոգիա	3	2			
Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում	3	2	Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում	4	2
			Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա	4	2
Առաջին բուժօգնություն	3	2			
Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	3	3	Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	4	2
			Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	4	2
Ուսումնաարտադրական պրակտիկա				4	2
<b>III կուրս</b>					
<b>Աշուն</b>			<b>Գարուն</b>		
Առարկա	կիսամյակ	կրեդիտ	կիսամյակ	կիսամյակ	կրեդիտ
			Իմունոլոգիա, կլինիկ-ն իմունոլոգիա	6	2
Ախտաբանական անատոմիա, ատամնաձևոտային համակարգի և բ/խ ախտաբանական անատոմիա	5	$\frac{2}{2}$			
Ախտաբանական ֆիզիոլոգիա	5	3	Ախտաբանական ֆիզիոլոգիա, գ/պ ախտաբանական ֆիզիոլոգիա	6	$\frac{2}{2}$
Դեղաբանություն	5	3	Դեղաբանություն	6	3
			Հիգիենա	6	3
Ներքին հիվանդությունների պրոպեդ.	5	3			
			Ներքին հիվանդություններ	6	3
Ընդհանուր վիրաբուժություն	5	3	Վիրաբուժական հիվանդություններ	6	3
Ճառագայթային ախտորոշում	5	3			
			Քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններ	6	3
Կարիեսաբուժություն և ատամի կարծր հյուսվածք-ի հիվ-եր և կանխարգելում	5	2	Կարիեսաբուժություն և ատամի կարծր հյուսվածք-ի հիվ-եր և կանխարգելում	6	3
Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	5	2			
Տեղային ցավազրկումը և անեզթեզիոլոգիան ստոմատոլոգիայում	5	2			
			Բերանի խոռոչի վիրաբուժություն	6	2
Նյութագիտություն	5	3			
Ատամների հասարակ հարադրավորում	5	2	Ատամների հասարակ հարադրավորում	6	2
Ուսումնաարտադրական պրակտիկա				6	2

IV կուրս					
Աշուն			Գարուն		
Առարկա	կիսամյակ	կրեդիտ	Առարկա	կիսամյակ	կրեդիտ
Համաճարակագրություն	7	3			
Հանրային առողջություն, առողջապահություն	7	3			
Կլինիկական դեղաբանություն	7	3			
Նյարդաբանություն	7	3			
			Մաշկավեներական հիվանդություններ	8	3
			Ինֆեկցիոն հիվանդություններ	8	3
Մանկաբարձություն	7	2	Մանկաբարձություն	8	2
			Մանկաբուժություն	8	2
			Արտակարգ իրավիճակների բժշկություն	8	2
Կարիեսոլոգիա և ատամի կարծր հյուսվածքների հիվանդություններ և կանխարգելում	7	3			
Էնդոդոնտիա	7	2	Էնդոդոնտիա	8	2
			Ֆիտոթերապիան ստոմատոլոգիայում	8	2
Բերանի խոռոչի վիրաբուժություն	7	4	Բերանի խոռոչի վիրաբուժություն	8	2
Ատամների հասարակ հարադրավորում	7	3			
Հարադրավորում ծնոտի լրիվ անատոմիայան ժամանակ	7	4			
			Ատամների բարդ հարադրավորում	8	2
			Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա	8	2
			Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա	8	2
			Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում	8	2
Ուսումնասարտադրական պրակտիկա				8	4

V կուրս					
Աշուն			Գարուն		
Առարկա	կիսամյակ	կրեդիտ	Առարկա	կիսամյակ	կրեդիտ
			Անզգայացում և վերակենդանացում	10	2
Աչքի հիվանդություններ	9	2			
Հոգեբուժություն	9	2			
Դատական բժշկություն	9	2			
Էնդոդոնտիա	9	2	Էնդոդոնտիա	10	3
Պարոդոնտոլոգիա	9	3	Պարոդոնտոլոգիա	10	2
Բ/խ լորձաթաղանթի հիվանդություններ	9	2	Բ/խ լորձաթաղանթի հիվանդություններ	10	2
			Ասեղնաբուժությունը ստոմատոլոգիայում	10	3
			Ֆիզիոթերապիան ստոմատոլոգիայում	10	2
Բերանի խոռոչի վիրաբուժություն	9	2			
Իմպլանտոլոգիա և բ/խ վերակառուցողական վիրաբուժություն	9	2	Իմպլանտոլոգիա և բ/խ վերակառուցողական վիրաբուժություն	10	2
Դիմաձևոտային վիրաբուժություն	9	3	Դիմաձևոտային վիրաբուժություն	10	2
Ատամների բարդ հարադրավորում	9	2	Ատամների բարդ հարադրավորում	10	3
Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա	9	2	Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա	10	2
Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա	9	2	Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա	10	2
Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում	9	2			
			Գենետիկորեն պայմանավորված հիվանդություններ	10	2
Ուսումնասիրտադրական պրակտիկա	9	2			
			Ամփոփիչ ատեստավորում	10	3



Համալսարան են՝

Գիտությունների մաթսագահ

նկատող՝ Ն. Խ. Սարիբեկյան

« 15 » 05 2018 թ

Հավելված

091101.00.7 -«Մտոմատուլոգիա» մասնագիտության /անընդհատ և  
ինտեգրացված / ՄԿԾ-ի  
ուսումնական պլանը ըստ ուստարիների և կիսամյակների

I կուրս										
Աշնանային կիսամյակ /I-ին կիսամյակ/ 17 շաբաթ										
Ստդուլի անվանումը	Կիսամյակի համար հատկացված ամսերի/կիսամյակների կրեդիտներ	Կիսամյակի համար հատկացված ժամեր	Ժամեր							
			Լատինային	Այդ թվում		Արտակարգային	Այդ թվում		Ֆեներություն կամ ստուգաթիվ	
				Դասախոսություններ	Գործնական պարամետրերներ		Դասախոսի կողմից խորհրդատվություն	Ինքնուրույն աշխատանք		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	Հայոց լեզու	2	60	34		34	26	9	17	ստ.
2.	Հայոց պատմություն	3	90	51	34	17	39	13	26	ստ.
3.	Ֆիզդաստիարակություն		-68	-34		-34			-34	
4.	Լատիներեն	2	60	34		34	26	9	17	ստ.
5.	Ընդհանուր հոգեբանություն	3	90	51	34	17	39	13	26	ստ.
6.	Օտար լեզու	3	90	51		51	39	14	25	ստ.
7.	Մաթեմատիկա, բժշկական ինֆորմատիկա	3	90	51	18	33	39	14	25	ստ.
8.	Ընդհանուր քիմիա	3	90	51	24	27	39	13	26	քնն.
9.	Կենսաբանություն	5	150	85	26	59	65	23	42	քնն.
10.	Մարդու անատոմիա	4	120	68	18	50	52	18	34	քնն.
11.	Բույսերի մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա	2	60	34	18	16	26	9	17	ստ.
<b>Ընդամենը</b>		<b>30</b>	<b>900</b>	<b>510</b>	<b>172</b>	<b>338</b>	<b>390</b>	<b>135</b>	<b>255</b>	<b>7/3</b>



Գարնանային կիսամյակ /2-րդ կիսամյակ/ 17 շաբաթ										
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	Հայոց լեզու	2	60	34		34	26	9	17	ստ.
2.	Ֆիզդաստիարակություն		-68	-34		-34			-34	
3.	Լատիներեն	2	60	34		34	26	9	17	ստ.
4.	Բժշկության պատմություն	3	90	51	34	17	39	13	26	ստ.
5.	Բժշկական հոգեբանություն	2	60	34	16	18	26	9	17	ստ.
6.	Օտար լեզու	2	60	34		34	26	9	17	ստ.
7.	Բժշկական ֆիզիկա	3	90	51	24	27	39	14	25	ստ.
8.	Մաթեմատիկա, բժշկական ինֆորմատիկա	2	60	34	16	18	26	9	17	ստ.
9.	Կենսաօրգանական քիմիա	3	90	51	26	25	39	13	26	քնն.
10.	Կենսաբանություն	3	90	51	14	37	39	14	25	քնն.
11.	Մարդու անատոմիա	4	120	68	20	48	52	18	34	քնն.
12.	Հյուսվածաբանություն, Էմբրիոլոգիա, բջջաբանություն	4	120	68	18	50	52	18	34	ստ.
<i>Ընդամենը</i>		<i>30</i>	<i>900</i>	<i>510</i>	<i>168</i>	<i>342</i>	<i>390</i>	<i>135</i>	<i>255</i>	<i>8/3</i>
II կուրս										
Աշնանային կիսամյակ /3-րդ կիսամյակ/ 17 շաբաթ										
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	Ֆիզդաստիարակություն		-68	-34		-34			-34	
2.	Կենսաքիմիա	4	120	68	26	42	52	18	34	ստ.
3.	Մարդու անատոմիա, - գ/պ անատոմիա	2	60	34	14	20	26	9	17	քնն.
4.	Նորմալ ֆիզիոլոգիա	4	120	68	24	44	52	18	34	քնն.
5.	Մանրէաբանություն	4	120	68	20	48	52	18	34	ստ.
6.	Հյուսվածաբանություն, Էմբրիոլոգիա - բ/խ հյուսվածաբանություն	3	90	51	8	43	39	14	25	քնն.
7.	Ֆարմակոգնոզիա	2	60	34	18	16	26	9	17	ստ.
8.	Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում	2	60	34	16	18	26	9	17	ստ.
9.	Առաջին բուժօգնություն	2	60	34	14	20	26	9	17	ստ.
10.	Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	3	90	51	16	35	39	13	26	ստ.
<i>Ընդամենը</i>		<i>30</i>	<i>900</i>	<i>510</i>	<i>174</i>	<i>336</i>	<i>390</i>	<i>135</i>	<i>255</i>	<i>6/3</i>

Գարնանային կիսամյակ /4-րդ կիսամյակ/ 17 շաբաթ										
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	Փիլիսոփայություն	3	90	51	34	17	39	14	25	ստ.
2.	Ֆիզդաստիարակություն		-68	-34		-34			-34	
3.	Կենսաքիմիա	2	60	34	14	20	26	9	17	քնն.
	-բ/խ կենսաքիմիա	2	60	34	8	26	26	9	17	
4.	Տոպոգրաֆիկ անատոմիա	2	60	51	20	31	9	2	7	ստ.
5.	Նորմալ ֆիզիոլոգիա	2	60	34	14	20	26	9	17	քնն.
	-դ/ծ ֆիզիոլոգիա	2	60	34	8	26	26	9	17	
6.	Մանրէաբանություն	2	60	34	12	22	26	9	17	քնն.
	-բ/խ մանրէաբանություն	2	60	34	8	26	26	9	17	
7.	Ախտաբանական անատոմիա	3	90	51	20	31	39	14	25	ստ.
8.	Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում	2	60	34	14	20	26	9	17	ստ.
9.	Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա	2	60	51	16	35	9	2	7	ստ.
10.	Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	2	60	34	12	22	26	9	17	ստ.
11.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	2	60	34	14	20	26	9	17	ստ.
12.	Ուսումնասարտադրական պրակտիկա	2	60				60			ստ.
<b>Ընդամենը</b>		30	900	510	198	312	390	113	217	8/3
<b>III կուրս</b>										
Աշնանային կիսամյակ /5-րդ կիսամյակ/ 17 շաբաթ										
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	Ախտաբանական անատոմիա	2	60	34	14	20	26	9	17	քնն.
	-ատամնաձնոտային համակարգի և բ/խ ախտաբանական անատոմիա	2	60	34	8	26	26	9	17	
2.	Ախտաբանական ֆիզիոլոգիա	3	90	51	22	29	39	14	25	ստ.
3.	Դեղաբանություն	3	90	51	16	35	39	13	26	ստ.
4.	Ներքին հիվանդությունների պրոպեդ.	3	90	51	16	35	39	14	25	քնն.
5.	Ընդհանուր վիրաբուժություն	3	90	51	20	31	39	13	26	քնն.
6.	Ճառագայթային ախտորոշում	3	90	51	24	27	39	14	25	ստ.
7.	Կարիեսոլոգիա և ատամի կարծր հյուսվածք-ի հիվ-եր և կանխարգելում	2	60	34	8	26	26	9	17	ստ.
8.	Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	2	60	34	14	20	26	9	17	ստ.
9.	Տեղային ցավազրկումը և անեզթեզիոլոգիան ստոմատոլոգիայում	2	60	34	12	22	26	9	17	ստ.

10.	Նյութագիտություն	3	90	51	18	33	39	13	26	սս.
11.	Ատամների հասարակ հարադրավորում	2	60	34	10	24	26	9	17	սս.
<i>Ընդամենը</i>		<i>30</i>	<i>900</i>	<i>510</i>	<i>182</i>	<i>328</i>	<i>390</i>	<i>135</i>	<i>255</i>	<i>8/3</i>

**Գարնանային կիսամյակ /6-րդ կիսամյակ/ 17 շաբաթ**

<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>	<b>5</b>	<b>6</b>	<b>7</b>	<b>8</b>	<b>9</b>	<b>10</b>	<b>11</b>
1.	Իմունոլոգիա, կլինիկ-ն իմունոլոգիա	2	60	34	18	16	26	9	17	սս.
2.	Ախտաբանական ֆիզիոլոգիա	2	60	34	12	22	26	9	17	քնն.
	- գ/պ ախտաբանական ֆիզիոլոգիա	2	60	34	8	26	26	9	17	
3.	Դեղաբանություն	3	90	51	16	35	39	14	25	քնն.
4.	Հիգիենա	3	90	68	24	44	22	4	18	սս.
5.	Ներքին հիվանդություններ	3	90	51	18	33	39	13	26	սս.
6.	Վիրաբուժական հիվանդություններ	3	90	51	20	31	39	14	25	քնն.
7.	Քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններ	3	90	51	20	31	39	13	26	սս.
8.	Կարիեսաբուժական և ատամի կարծր հյուսվածք-ի հիվ-եր և կանխարգելում	3	90	51	12	39	39	14	25	սս.
9.	Բերանի խոռոչի վիրաբուժություն	2	60	51	18	33	9	2	7	սս.
10.	Ատամների հասարակ հարադրավորում	2	60	34	10	24	26	9	17	քնն.
11.	Ուսումնասիրտադրական պրակտիկա	2	60				60			սս.
<i>Ընդամենը</i>		<i>30</i>	<i>900</i>	<i>510</i>	<i>176</i>	<i>334</i>	<i>390</i>	<i>110</i>	<i>220</i>	<i>7/4</i>

**IV կուրս**

**Աշնանային կիսամյակ /7-րդ կիսամյակ/ 17 շաբաթ**

<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>	<b>5</b>	<b>6</b>	<b>7</b>	<b>8</b>	<b>9</b>	<b>10</b>	<b>11</b>
1.	Համաճարակաբանություն	3	90	51	20	31	39	14	25	սս.
2.	Հանրային առողջություն, առողջապահություն	3	90	51	20	31	39	13	26	սս.
3.	Կլինիկական դեղաբանություն	3	90	51	18	33	39	14	25	քնն.
4.	Նյարդաբանություն	3	90	51	24	27	39	13	26	քնն.
5.	Մանկաբարձություն	2	60	34	12	22	26	9	17	սս.
6.	Կարիեսաբուժական և ատամի կարծր հյուսվածքների հիվանդություններ և կանխարգելում	3	90	51	10	41	39	14	25	քնն.
7.	Էնդոդոնտիա	2	60	34	8	26	26	9	17	սս.
8.	Բերանի խոռոչի վիրաբուժություն	4	120	68	18	50	52	18	34	սս.
9.	Ատամների հասարակ հարադրավորում	3	90	51	8	43	39	13	26	սս.
10.	Հարադրավորում ծնոտի լրիվ անատամության ժամանակ	4	120	68	10	58	52	18	34	քնն.
<i>Ընդամենը</i>		<i>30</i>	<i>900</i>	<i>510</i>	<i>148</i>	<i>362</i>	<i>390</i>	<i>135</i>	<i>255</i>	<i>6/4</i>

Գարնանային կիսամյակ /8-րդ կիսամյակ/ 17 շաբաթ										
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	Մաշկավեներական հիվանդություններ	3	90	51	24	27	39	14	25	սս.
2.	Ինֆեկցիոն հիվանդություններ	3	90	51	24	27	39	13	26	սս.
3.	Մանկաբարձություն	2	60	34	12	22	26	9	17	քնն.
4.	Մանկաբուժություն	2	60	34	20	14	26	9	17	սս.
5.	Արտակարգ իրավիճակների բժշկություն	2	60	34	16	18	26	9	17	սս.
6.	Էնդոդոնտիա	2	60	51	12	39	9	2	7	քնն.
7.	Ֆիտոթերապիան ստոմատոլոգիայում	2	60	34	18	16	26	9	17	սս.
8.	Բերանի խոռոչի վիրաբուժություն	2	60	51	16	35	9	2	7	քնն.
9.	Ատամների բարդ հարադրավորում	2	60	51	8	43	9	2	7	սս.
10.	Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա	2	60	34	8	26	26	9	17	սս.
11.	Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա	2	60	34	8	26	26	9	17	սս.
12.	Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում	2	60	51	12	39	9	2	7	քնն.
13.	Ուսումնաարտադրական պրակտիկա	4	120				120			սս.
<i>Ընդամենը</i>		30	900	510	178	332	390	89	181	9/4
V կուրս										
Աշնանային կիսամյակ /9-րդ կիսամյակ/ 17 շաբաթ										
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1.	Աչքի հիվանդություններ	2	60	34	16	18	26	9	17	սս.
2.	Հոգեբուժություն	2	60	34	24	10	26	9	17	սս.
3.	Դատական բժշկություն	2	60	34	16	18	26	9	17	սս.
4.	Էնդոդոնտիա	2	60	34	8	26	26	9	17	քնն.
5.	Պարոդոնտոլոգիա	3	90	51	10	41	39	14	25	սս.
6.	Բ/խ լորձաթաղանթի հիվանդություններ	2	60	34	8	26	26	9	17	քնն.
7.	Բերանի խոռոչի վիրաբուժություն	2	60	51	12	39	9	3	6	քնն.
8.	Իմպլանտոլոգիա և բ/խ վերակառուցողական վիրաբուժություն	2	60	34	12	22	26	9	17	սս.
9.	Դիմաձևոտային վիրաբուժություն	3	90	51	12	39	39	13	26	սս.
10.	Ատամների բարդ հարադրավորում	2	60	51	8	43	9	4	5	սս.
11.	Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա	2	60	34	8	26	26	9	17	սս.
12.	Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա	2	60	34	8	26	26	9	17	սս.
13.	Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում	2	60	34	6	28	26	9	17	քնն.

14.	Ուսումնաարտադրական պրակտիկա	2	60				60			ստ.
<i>Ընդամենը</i>		<i>30</i>	<i>900</i>	<i>510</i>	<i>148</i>	<i>362</i>	<i>390</i>	<i>135</i>	<i>255</i>	<i>10/4</i>
<b>Գարնանային կիսամյակ /10-րդ կիսամյակ/ 17 շաբաթ</b>										
<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>	<b>5</b>	<b>6</b>	<b>7</b>	<b>8</b>	<b>9</b>	<b>10</b>	<b>11</b>
1.	Անզգայացում և վերակենդանացում	2	60	34	16	18	26	9	17	ստ.
2.	Էնդոդոնտիա	3	90	51	12	39	39	14	25	քնն.
3.	Պարոդոնտոլոգիա	2	60	51	10	41	9	3	6	քնն.
4.	Բ/խ լորձաթաղանթի հիվանդություններ	2	60	34	8	26	26	9	17	քնն.
5.	Ասեղնաբուժությունը ստոմատոլոգիայում	3	90	68	22	46	22	6	16	ստ.
6.	Ֆիզիոթերապիան ստոմատոլոգիայում	2	60	34	12	22	26	9	17	ստ.
7.	Իմպլանտոլոգիա և բ/խ վերակառուցողական վիրաբուժություն	2	60	34	12	22	26	9	17	ստ.
8.	Դիմաձևտային վիրաբուժություն	2	60	51	12	39	9	3	6	ստ.
9.	Ատամների բարդ հարադրավորում	3	90	51	8	43	39	13	26	քնն.
10.	Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա	2	60	34	6	28	26	9	17	ստ.
11.	Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա	2	60	34	6	28	26	9	17	ստ.
12.	Գենետիկորեն պայմանավորված հիվանդություններ	2	60	34	8	26	26	9	17	ստ.
13.	Ամփոփիչ ատեստավորում	3	90				90			
<i>Ընդամենը</i>		<i>30</i>	<i>900</i>	<i>510</i>	<i>132</i>	<i>378</i>	<i>390</i>	<i>102</i>	<i>198</i>	<i>8/4</i>

❖ *Վերը նշված ծավալում չի ընդգրկվում ֆիզդաստիարակության դասերին հատկացված դասաժամերը:*



Հաստատում եմ՝

Գիտաբանության Գիտությունների  
 թեկտոր

Ն. Խ. Սարիբեկյան

« 15 »

05

2018 թ

Հավելված

091101.00.7-«Մտոմատուլոգիա» մասնագիտության անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի հիմնական մոդուլների վերջնարդյունքների ձևավորման քարտեզ

Ընդհանրական վերջնարդյունքների ձևավորում

N		ԸՎ-1	ԸՎ-2	ԸՎ-3	ԸՎ-4	ԸՎ-5	ԸՎ-6	ԸՎ-7	ԸՎ-8
1.	Հայոց լեզու					x			x
2.	Հայոց պատմություն	x		x					x
3.	Ֆիզդաստիարակություն						x		
4.	Փիլիսոփայություն	x	x	x	x	x			x
5.	Լատիներեն	x				x			x
6.	Բժշկության պատմություն	x		x		x			
7.	Ընդհանուր հոգեբանություն	x			x	x			x
8.	Բժշկական հոգեբանություն				x			x	
9.	Օտար լեզու					x			x
10.	Բժշկական ֆիզիկա	x				x			
11.	Մաթեմատիկա, բժշկական ինֆորմատիկա	x				x			
12.	Ընդհանուր քիմիա	x		x		x		x	
13.	Կենսաօրգանական քիմիա	x		x		x		x	
14.	Կենսաբանություն	x							
15.	Կենսաքիմիա բ/յ կենսաքիմիա	x				x		x	x
16.	Մարդու անատոմիա գ/պ անատոմիա								
17.	Նորմալ ֆիզիոլոգիա դ/ծ ֆիզիոլոգիա	x				x			x
18.	Մանրէաբանություն բ/յ մանրէաբանություն	x		x	x	x		x	
19.	Իմունոլոգիա, կլինիկական իմունոլոգիա	x			x			x	
20.	Հյուսվածաբանություն, էմբրիո- լոգիա, բ/յ հյուսվածաբանություն								
21.	Ախտաբանական անատոմիա, ատամնաձևաբանական համակարգի և բ/յ ախտաբանական անատոմիա	x				x			x
22.	Ախտաբանական ֆիզիոլոգիա գ/պ ախտաբանական ֆիզիոլոգիա	x				x			

N		ԸՎ-1	ԸՎ-2	ԸՎ-3	ԸՎ-4	ԸՎ-5	ԸՎ-6	ԸՎ-7	ԸՎ-8
1.	Բույսերի մորֆոլոգիա, ֆիզիոլոգիա	x				x			
2.	Ֆարմակոգնոզիա	x				x			
3.	Դեղաբանություն	x			x	x		x	x
4.	Համաճարակաբանություն	x		x	x			x	
5.	Հիգիենա	x		x		x			
6.	Հանրային առողջություն, առողջապահություն	x				x			
7.	Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա	x			x				x
8.	Ներքին հիվանդություններ	x			x	x		x	x
9.	Կլինիկական դեղաբանություն	x			x	x		x	x
10.	Ընդհանուր վիրաբուժություն,	x			x	x		x	x
11.	Վիրաբուժական հիվանդություններ	x			x	x		x	x
12.	Անզգայացում և վերակենդանացում								
13.	Ճառագայթային ախտորոշում	x			x	x		x	x
14.	Նյարդաբանություն	x							
15.	Աչքի հիվանդություններ	x						x	
16.	Քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններ	x			x				
17.	Մաշկավեներական հիվանդություններ	x							
18.	Ինֆեկցիոն հիվանդություններ	x			x	x		x	
19.	Հոգեբուժություն				x			x	
20.	Դատական բժշկություն	x		x					
21.	Մանկաբարձություն	x			x				
22.	Մանկաբուժություն	x			x		x	x	
23.	Արտակարգ իրավիճակների բժշկություն	x			x	x		x	x
24.	Առաջին բուժօգնություն				x			x	
25.	Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	x				x			x
26.	Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում								
27.	Կարիեսաբուժական և ստամիկարծր հյուսվածքների հիվանդություններ և կանխարգելում	x							
28.	Էնդոդոնտիկա	x							
29.	Պարոդոնտոլոգիա	x							
30.	Բ/խ լորձաթաղանթի հիվանդություններ	x							

N		ԸՎ-1	ԸՎ-2	ԸՎ-3	ԸՎ-4	ԸՎ-5	ԸՎ-6	ԸՎ-7	ԸՎ-8
31.	Ֆիտոթերապիան ստոմատոլոգիայում	x	x		x	x		x	x
32.	Ասեղնաբուժությունը ստոմատոլոգիայում	x	x		x	x		x	x
33.	Ֆիզիոթերապիան ստոմատոլոգիայում					x			x
34.	Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	x				x			x
35.	Տեղային ցավազրկումը և անեզթե- զիոլոգիան ստոմատոլոգիայում	x							
36.	Բերանի խոռոչի վիրաբուժություն								
37.	Իմպլանտոլոգիա և ք/խ վերակառուցողական վիրաբուժություն								
38.	Դիմաձևտային վիրաբուժություն								
39.	Նյութագիտություն	x				x			
40.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	x				x			x
41.	Ատամների հասարակ հարադրավորում	x							
42.	Հարադրավորում ծնոտի լրիվ անատամության ժամանակ	x							
43.	Ատամների բարդ հարադրավորում	x							
44.	Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա								
45.	Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա								
46.	Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում								
47.	Գենետիկորեն պայմանավորված հիվանդություններ	x			x	x			



Ընդհանուր մասնագիտական վերջնարդյունքների ձևավորում

N		ԸՄՎ-1	ԸՄՎ-2	ԸՄՎ-3	ԸՄՎ-4	ԸՄՎ-5	ԸՄՎ-6	ԸՄՎ-7	ԸՄՎ-8	ԸՄՎ-9	ԸՄՎ-10
1.	Հայոց լեզու	x	x			x					
2.	Հայոց պատմություն										
3.	Ֆիզդաստիարակություն										
4.	Փիլիսոփայություն			x	x						
5.	Լատիներեն	x	x	x		x					
6.	Բժշկության պատմություն	x	x								
7.	Ընդհանուր հոգեբանություն			x	x						
8.	Բժշկական հոգեբանություն		x	x	x						
9.	Օտար լեզու	x	x			x					
10.	Բժշկական ֆիզիկա				x		x				x
11.	Մաթեմատիկա, բժշկական ինֆորմատիկա	x	x		x	x	x				
12.	Ընդհանուր քիմիա	x	x		x		x	x	x		
13.	Կենսաօրգանական քիմիա	x	x		x		x	x	x		
14.	Կենսաբանություն	x	x				x		x		
15.	Կենսաքիմիա բ/ս կենսաքիմիա	x	x				x	x	x		
16.	Մարդու անատոմիա, գ/ս անատոմ.	x					x		x		
17.	Նորմալ ֆիզիոլոգիա, դ/ծ ֆիզիոլոգ.	x	x	x	x		x		x		
18.	Մանրէաբանություն, բ/ս մանրէաբանություն	x			x	x		x	x		
19.	Բուժնոլոգիա, կլինիկական իմունոլոգիա	x			x			x	x		
20.	Հյուսվածաբանություն, էմբրիո- լոգիա, բ/ս հյուսվածաբանություն	x					x		x		
21.	Ախտաբանական անատոմիա, ատամնաձնոտային համակարգի և բ/ս ախտաբանական անատոմիա	x		x	x	x			x		
22.	Ախտաբանական ֆիզիոլոգիա գ/ս ախտաբանական ֆիզիոլոգիա	x			x		x		x		
23.	Բույսերի մորֆոլոգիա, ֆիզիոլոգիա,	x	x		x	x		x			
24.	Ֆարմակոլոգիա	x	x		x	x		x			
25.	Դեղաբանություն	x	x		x	x		x			
26.	Համաճարակաբանություն	x				x					
27.	Հիգիենա	x	x				x		x		
28.	Հանրային առողջություն, առողջապահություն	x	x	x		x					
29.	Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա		x	x	x	x			x		x

N		ԸՄՎ-1	ԸՄՎ-2	ԸՄՎ-3	ԸՄՎ-4	ԸՄՎ-5	ԸՄՎ-6	ԸՄՎ-7	ԸՄՎ-8	ԸՄՎ-9	ԸՄՎ-10
30.	Ներքին հիվանդություններ,	x		x			x	x	x		
31.	Կլինիկական դեղաբանություն	x		x			x	x	x		
32.	Ընդհանուր վիրաբուժություն				x	x		x	x		x
33.	Վիրաբուժական հիվանդություններ				x	x		x	x		x
34.	Անզգայացում և վերակենդանացում			x	x			x	x	x	
35.	Ճառագայթային ախտորոշում	x	x	x	x	x			x		x
36.	Նյարդաբանություն			x				x	x		
37.	Աչքի հիվանդություններ	x			x	x		x	x	x	
38.	Քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններ			x	x	x		x	x		x
39.	Մաշկավեներական հիվանդություններ							x	x		
40.	Ինֆեկցիոն հիվանդություններ	x		x	x	x		x	x	x	
41.	Հոգեբուժություն		x	x	x			x		x	
42.	Դատական բժշկություն	x	x	x	x	x	x		x		
43.	Մանկաբարձություն			x	x	x					
44.	Մանկաբուժություն	x	x	x	x	x		x	x	x	
45.	Արտակարգ իրավիճակների բժշկություն	x		x	x		x	x	x	x	x
46.	Առաջին բուժօգնություն			x	x			x	x	x	
47.	Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	x	x	x	x	x	x	x	x		x
48.	Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում					x			x		
49.	Կարիեսաբուժական և ատամի կարծր հյուսվածքների հիվանդություններ և կանխարգելում	x			x	x	x	x	x		x
50.	Էնդոդոնտիա	x			x	x	x	x	x		x
51.	Պարոդոնտոլոգիա	x			x	x		x	x		x
52.	Բ/խ լորձաթաղանթի հիվանդություններ	x			x	x		x	x		x
53.	Ֆիտոթերապիան ստոմատոլոգիայում	x	x	x	x	x		x	x		
54.	Ասեղնաբուժությունը ստոմատոլոգիայում	x	x	x	x			x	x		
55.	Ֆիզիոթերապիան ստոմատոլոգիայում		x	x	x	x		x			
56.	Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	x	x	x	x	x	x	x	x		x
57.	Տեղային ցավազրկումը և անեզթեզիոլոգիան ստոմատոլոգիայում	x			x		x	x	x		x

N		ԸՄՎ-1	ԸՄՎ -2	ԸՄՎ -3	ԸՄՎ -4	ԸՄՎ -5	ԸՄՎ -6	ԸՄՎ -7	ԸՄՎ -8	ԸՄՎ -9	ԸՄՎ -10
58.	Բերանի խոռոչի վիրաբուժություն	x			x	x		x	x		x
59.	Իմպլանտոլոգիա և ք/խ վերակառուցողական վիրաբուժություն	x			x	x		x	x		x
60.	Դիմաձևտային վիրաբուժություն	x			x	x		x	x		x
61.	Նյութագիտություն	x	x		x		x	x			x
62.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա	x	x	x	x	x	x	x	x		x
63.	Ատամների հասարակ հարադրավորում	x	x		x	x		x	x		x
64.	Հարադրավորում ծնոտի լրիվ անատամության ժամանակ	x	x		x	x		x	x		x
65.	Ատամերի բարդ հարադրավորում	x	x		x	x		x	x		x
66.	Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա					x		x	x		
67.	Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա					x		x	x		
68.	Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում			x	x						
69.	Գենետիկորեն պայմանավորված հիվանդություններ	x			x				x		

Մասնագիտական վերջնարդյունքների ձևավորում

N		ՄՎ-1	ՄՎ-2	ՄՎ-3	ՄՎ-4	ՄՎ-5	ՄՎ-6	ՄՎ-7	ՄՎ-8	ՄՎ-9	ՄՎ-10	ՄՎ-11	ՄՎ-12	ՄՎ-13	ՄՎ-14	ՄՎ-15	ՄՎ-16	ՄՎ-17	ՄՎ-18		
1.	Հայոց լեզու																				
2.	Հայոց պատմություն																				
3.	Ֆիզդաստիարակություն																				
4.	Փիլիսոփայություն																				
5.	Լատիներեն																	x			
6.	Բժշկության պատմություն																				
7.	Ընդհանուր հոգեբանություն					x				x			x								
8.	Բժշկական հոգեբանություն	x								x			x								
9.	Օտար լեզու																				
10.	Բժշկական Ֆիզիկա																		x		
11.	Մաթեմատիկա, բժշկական ինֆորմատիկա				x											x	x	x			
12.	Ընդհանուր քիմիա	x									x	x							x		
13.	Կենսաօրգանական քիմիա	x									x	x							x		
14.	Կենսաբանություն																				
15.	Կենսաքիմիա բ/խ կենսաքիմիա	x												x					x		
16.	Մարդու անատոմիա, գ/պ անատոմ.																				
17.	Նորմալ ֆիզիոլոգիա, դ/ծ ֆիզիոլոգ.	x											x	x				x	x		
18.	Մանրէաբանություն, բ/խ մանրէաբանություն	x		x		x	x		x				x					x	x	x	
19.	Իմունոլոգիա, կլինիկական իմունոլոգիա	x	x		x	x				x			x								
20.	Հյուսվածաբանություն, էմբրիո- լոգիա, բ/խ հյուսվածաբանություն																				
21.	Ախտաբանական անատոմիա գ/պ ախտաբանական անատոմիա					x	x													x	
22.	Ախտաբանական ֆիզիոլոգիա գ/պ ախտաբանական ֆիզիոլոգիա	x				x	x													x	x
23.	Բույսերի մորֆոլոգիա, ֆիզիոլոգիա									x											
24.	Ֆարմակոլոգիա									x											
25.	Դեղաբանություն			x					x	x	x	x								x	
26.	Համաճարակաբանություն	x		x							x									x	x
27.	Հիգիենա	x		x	x							x	x	x						x	

N		ՄՎ-1	ՄՎ-2	ՄՎ-3	ՄՎ-4	ՄՎ-5	ՄՎ-6	ՄՎ-7	ՄՎ-8	ՄՎ-9	ՄՎ-10	ՄՎ-11	ՄՎ-12	ՄՎ-13	ՄՎ-14	ՄՎ-15	ՄՎ-16	ՄՎ-17	ՄՎ-18		
28.	Հանրային առողջություն, առողջապահություն	x	x		x								x	x	x	x	x			x	
29.	Ներքին հիվանդությունների պրոպեդևտիկա	x				x					x										
30.	Ներքին հիվանդություններ	x						x			x	x		x					x		
31.	Կլինիկական դեղաբանություն	x						x			x	x		x					x		
32.	Ընդհանուր վիրաբուժություն					x					x									x	
33.	Վիրաբուժական հիվանդություններ					x					x									x	
34.	Անզգայացում և վերակենդանացում	x							x												
35.	Ճառագայթային ախտորոշում	x	x			x	x														
36.	Նյարդաբանություն	x				x	x						x	x							
37.	Աչքի հիվանդություններ										x			x							
38.	Քիթ, կոկորդ, ականջի հիվանդություններ	x					x												x		
39.	Մաշկավեներական հիվանդություններ	x				x	x		x	x		x		x							
40.	Ինֆեկցիոն հիվանդություններ	x	x	x			x		x					x	x				x		
41.	Հոգեբուժություն	x					x				x			x							
42.	Դատական բժշկություն	x				x	x	x						x					x		
43.	Մանկաբարձություն										x			x						x	
44.	Մանկաբուժություն	x	x			x	x		x				x	x					x	x	
45.	Արտակարգ իրավիճակների բժշկություն	x		x								x								x	
46.	Առաջին բուժօգնություն	x									x										
47.	Թերապևտիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա		x			x			x										x	x	x
48.	Ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելում	x	x		x	x	x		x	x			x	x							
49.	Կարիեստոլոգիա և ատամի կարծր հյուսվածքների հիվանդություններ և կանխարգելում	x				x	x		x	x		x	x	x					x	x	
50.	Էնդոդոնտիա	x				x	x		x	x		x	x	x					x	x	
51.	Պարոդոնտոլոգիա	x	x			x	x		x	x		x	x	x					x	x	x
52.	Բ/խ լորձաթաղանթի հիվանդություններ	x	x			x	x		x	x		x	x	x					x	x	x

N		ՄՎ-1	ՄՎ-2	ՄՎ-3	ՄՎ-4	ՄՎ-5	ՄՎ-6	ՄՎ-7	ՄՎ-8	ՄՎ-9	ՄՎ-10	ՄՎ-11	ՄՎ-12	ՄՎ-13	ՄՎ-14	ՄՎ-15	ՄՎ-16	ՄՎ-17	ՄՎ-18	
53.	Ֆիտոթերապիան ստոմատոլոգիայում	x							x			x								x
54.	Ասեղնաբուժությունը ստոմատոլոգիայում	x							x											x
55.	Ֆիզիոթերապիան ստոմատոլոգիայում								x			x						x	x	x
56.	Վիրաբուժական ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա		x			x			x									x	x	x
57.	Տեղային ցավազրկումը և անեզթեզիոլոգիան ստոմատոլոգիայում					x	x		x									x		
58.	Բերանի խոռոչի վիրաբուժություն		x			x	x		x	x		x								x
59.	Ինվլանտալոգիա և բ/խ վերակառուցողական վիրաբուժություն					x	x		x	x		x								x
60.	Դիմաձևոտային վիրաբուժություն					x	x		x	x		x								x
61.	Նյութագիտություն																	x	x	
62.	Օրթոպեդիկ ստոմատոլոգիայի պրոպեդևտիկա		x			x			x									x	x	x
63.	Ատամների հասարակ հարադրավորում	x				x	x		x	x					x			x		
64.	Հարադրավորում ծնոտի լրիվ անատամության ժամանակ	x				x	x		x	x								x		
65.	Ատամների բարդ հարադրավորում	x				x	x		x	x								x		
66.	Մանկական թերապևտիկ ստոմատոլոգիա	x				x	x		x	x		x								
67.	Մանկական վիրաբուժական ստոմատոլոգիա	x				x	x		x	x		x								
68.	Օրթոդոնտիա և մանկական հարադրավորում	x				x	x		x	x			x	x				x	x	x
69.	Գենետիկորեն պայմանավորված հիվանդություններ	x			x	x	x		x					x				x		



Համաձայնում եմ՝

Գիտելով, որ հիմնարկի նախագահ

ռեկտոր՝ *Ն. Խ. Սարիբեկյան*

«15» \_\_\_\_\_ 05 \_\_\_\_\_ 2018 թ

091101.00.7 -«Ստումատոլոգիա» մասնագիտության  
անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի  
**ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐ**

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՄԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Բուժական գործ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Բուժական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I, II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2018-2019		

ԿԱԶՄՈՂ	պ.գ.թ., դոցենտ Հարություն Զավենի Ալեքսանյան (արտ. շահակյից), պ.գ.թ., դոցենտ Արմեն Էմիլի Խաչիկյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 91 50-41-48, +374 91 20 15 05
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	<a href="mailto:haleksanyan@yahoo.com">haleksanyan@yahoo.com</a> , <a href="mailto:armen@fulbrightmail.org">armen@fulbrightmail.org</a>

ԱՍԲՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՍԲՈՆԻ ՎԱՐԻՉ	պ.գ.թ., դոցենտ Արմեն Էմիլի Խաչիկյան

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ**

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդակ.	Քննութ. ժամ	Ստուգաբք
I	I	2	17	2	60	34	22	12	17	9		+
	II	2	17	2	60	34	24	10	17	9		+
<b>Ընդամենը</b>		<b>4</b>	<b>34</b>	<b>4</b>	<b>120</b>	<b>68</b>	<b>46</b>	<b>22</b>	<b>34</b>	<b>18</b>		

- ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**
  - Պատմություն,
  - Հասարակագիտություն,
  - Աշխարհագրություն:
- ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
 «Հայոց պատմություն» դասընթացն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Դասընթացը հնարավորություն է տալիս ուսանողներին ծանոթանալ իրադարձություններով և մշակութային նվաճումներով հարուստ մեր երկրի պատմությանը, ճանաչել մեր ժողովրդի ավանդույթները, բարքերն ու սովորույթները:

**3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.**

**3.1. Դասընթացի նպատակը**

Ուսանողներին ծանոթացնել Հայոց հին հազարամյա պատմությանը, ցույց տալ, որ հայ ժողովուրդը հանդիսացել է համաշխարհային քաղաքակրթության ձևավորման հիմնական և ակտիվ մասնակիցներից մեկը և իր որոշակի ավանդն է ներդրել համամարդկային մշակույթի գանձարանը:

**3.2. Դասընթացի խնդիրները**

- Հայ ժողովրդի պատմությունից տալ գիտելիքի անհրաժեշտ նվազագույն պաշարը,
- Հայ ժողովրդի պատմությունը ներկայացնել ապահովելով կապը Համաշխարհայի պատմության համապատասխան իրադարձությունների և ընթացքի հետ

**4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է**

**Իմանա** Հայաստանի և նրա հարևան երկրների տեղը քարտեզի վրա հայ ժողովրդի պատմության հիմնական իրադարձությունները, Հայոց պատմության կարևորագույն գործիչներին, մշակութային վաճումները հայ հասարակության զարգացման տարբերփուլերում, հայկական քաղաքակրթության հիմնական նվաճումները և արժեքները:

**Կարողանա** տարբերակել հայ հասարակության և պետության զարգացման փուլերը, հասկանա առավել կարևոր պատմական իրադարձությունների պատճառները և հետևանքները, օգտվել աղբյուրներից, վերլուծել դրանց հաղորդած տեղեկությունները և անել եզրահանգումներ, բանավոր և գրավոր ձևով արտահայտել իր մտքերը, բերել փաստեր և այլ ապացույցներ, ձևավորել սեփական կարծիք պատմական իրադարձությունների վերաբերյալ և այն արտահայտել:

**Տիրապետի** Հայ ժողովրդի պատմության կարևորագույն իրադարձություններին, դեպքերի ժամանակագրությանը և պատճառահետևանքային կապերին:

**5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. A. Khachikyan, History of Armenia. A Brief Review, Yerevan, 2010;
2. A. Redgate, The Armenians, New Jersey, 2000;
3. Illustrated History of Europe, edited by Frederic Delouche, London, 2001;
4. R. Hovhannisyan, Armenian People from Ancient to Modern Times, New York, 2004;
5. The Heritage of World Civilizations, Vol. 1-2, New Jersey, 2000.

**6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ**

**ՄԻԱՎՈՐ**

Հաճախումներ	20
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	10

**7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ**

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F



ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	<b>ՕՏԱՐ ԼԵԶՈՒ, ԱՆԳԼԵՐԵՆ</b>		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I, II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2018-2019		

ԿԱԶՄՈՂ	բան.գ.թ. Տաթևիկ Սեդրակի Կարապետյան (արտ. շահակից) Լիլիթ Արտակի Մուրադյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 93 77 25 99, +374 98 84 49 95
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	<a href="mailto:karapetyants@yahoo.com">karapetyants@yahoo.com</a> , <a href="mailto:lilimuradyan@gmail.com">lilimuradyan@gmail.com</a>

ԱՄԲԻՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	պ.գ.թ., դոցենտ Արմեն Էմիլի Խաչիկյան

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ**

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթաբաժնային ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդով.	Քննություն	Ստուգաթիվ
I	I	3	17	3	90	51	-	51	25	14		+
	II	2	17	3	60	34	-	34	17	9		+
<b>Ընդամենը</b>		<b>5</b>	<b>34</b>	<b>4</b>	<b>120</b>	<b>68</b>		<b>68</b>	<b>42</b>	<b>23</b>		

1. **ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է`**  
 – Օտար լեզվի դասընթաց դադարեցնել
2. **ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
 Դասընթացը միտված է ապագա բժիշկների հումանիտար մտածողության ձևավորմանը, որի արդյունքում լեզվից դուրս ուսանողները կարող են տարբերակել հիվանդի վարքագիծը և ռեակցիաները, ձևավորել և ամրապնդել համատեղ աշխատանքը ապագա գործընկերների հետ բժշկական թիմում, մասնավորապես` բանավոր ներկայացումների և գիտահետազոտական աշխատանքների ծավալում (ներկայացնել և/կամ հրատարակել գիտահետազոտական արդյունքներ), միջմշակութային իրազեկում և հաղորդակցություն (հիվանդների հետ հաղորդակցություն):
3. **ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.**
  - 3.1. **Դասընթացի նպատակը**  
 Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների բանավոր խոսքի կարողությունը, խորացնել քերականական գիտելիքները, հարստացնել բառապաշարը, զարգացնել խոսելու և լսելու, մասնագիտական տերմիններն ու տերմինաբանական կապակցությունները ճշգրտորեն ընտրելու և կիրառելու հմտությունները, մասնագիտական մատչելի տեքստեր վերլուծելու և վերարտադրելու կարողությունները:

### 3.2. Դասընթացի խնդիրները

- ուսանողների հետ վարել անգլերենի բանավոր խոսքի տիրապետմանն ուղղված տարաբնույթ աշխատանքներ՝ կատարելագործելով բանավոր խոսքի ճշգրտությունն ու հստակությունը,
- թեմատիկ աուդիո և վիդեո նյութերի միջոցով զարգացնել ուսանողների լսելու կարողությունը,
- բարելավել կարդալու հմտությունը,
- գործնականում ամրապնդել լեզվի քերականության իմացությունը:

#### 4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է

**Իմանա** առնվազն 4000 բառապաշարային միավոր, հիմնական բառակազմական կաղապարները, խոսքի մասերը, նախադասության անդամները, պարզ և բարդ նախադասությունների շարահյուսությունը:

**Կարողանա** թարգմանել հատուկ բժշկական տեքստեր բառարանով և առանց բառարանի, փոխանցել օտարալեզու և մայրենի լեզվով տեքստերի ընդհանուր բովանդակությունը, վարել կենցաղային գրույցներ, գրել անձնական նամակներ, կազմել ճիշտ խոսք (բանավոր, գրավոր)՝ հետևելով խոսքի կուլտուրայի կանոններին, կողմնորոշվել սոցիալ-մշակութային հաղորդակցության տարբեր իրավիճակներում:

**Տիրապետի** անգլերեն լեզվին՝ որպես միջմշակութային հաղորդակցության միջոցի:

#### 5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Eric H. Glendinning, Ron Howard, Professional English in Use, Medicine, ISBN-13: 978-0521682015, 2009, Cambridge.
2. MacCarter S., Oxford English for Careers: Medicine 1, ISBN: 978-0-19-402300-9, 2011.
3. MacCarter S., Oxford English for Careers: Medicine 2, ISBN: 978-0-19-402300-9, 2011.
4. Mária Gyórfy, English for Doctors, Schenk Verlag GmbH, Passau 2006, ISBN 3-939337-10-2
5. Murphy, R., Essential Grammar in Use, Cambridge University Press 2015.
6. Roberts R., Clare A., Wilson J. J., New Total English Intermediate. Students' Book, Harlow, Pearson Education Limited, 2011.
7. Sean O. Henderson, Emergency Medicine, ISBN: 1-57059-668-9, Copyright ©2006 Landes Bioscience, Georgetown, Texas, U.S.A.

#### 6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

	ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ	20
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	10

#### 7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	<b>ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ</b>		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոնատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոնատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2018-2019		

ԿԱԶՄՈՂ	Նինա Զավենի Խլղաթյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 98 33 77 97
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	nina19-89@mail.ru

ԱՄԲԻՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	պ.գ.թ., դոցենտ Արմեն Էմիլի Խաչիկյան

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ**

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդով.	Քննություն	Մտուցարք
I	II	3	17	3	90	51	34	17	26	13		+
<b>Ընդամենը</b>		<b>3</b>	<b>17</b>	<b>3</b>	<b>90</b>	<b>51</b>	<b>34</b>	<b>17</b>	<b>26</b>	<b>13</b>		

<p><b>1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Համաշխարհային և տարածաշրջանի պատմության</li> <li>- Անատոմիա</li> <li>- Կենսաբանություն</li> </ul>
<p><b>2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ</b></p> <p>«Բժշկության պատմություն» դասընթացը ուսումնասիրում է բժշկության պատմական զարգացման փուլերը, տարբեր դարաշրջաններում հաճախ հանդիպող հիվանդությունները, բժշկության զարգացման առանձնահատկությունները՝ կախված կրոնական նկատառումներից և տարածաշրջանից:</p>
<p><b>3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.</b></p> <p><b>3.1. Դասընթացի նպատակը</b></p> <p>Դասընթացի նպատակն է բարձրացնել ուսանողի ընդհանուր և մասնագիտական գիտելիքների մակարդակը՝ կատարելով շատ կարևոր դեր ապագա բժշկի պատրաստման գործում, սովորեցնելով բժշկության պատմությունը, օգնել ուսանողներին մուտք գործել մասնագիտական աշխարհ:</p> <p><b>3.2. Դասընթացի խնդիրները</b></p> <p>1. Դասախոսությունների և գործնական պարապմունքների ընթացքում ուսումնասիրել աշխարհի բոլոր ժողովրդների բժշկության պատմությունը՝ սկսած նախնադարից մինչև մեր օրերը:</p> <p>2. Ծանոթացնել կարևորագույն համաշխարհային բժշկական դպրոցների գործունեությանը:</p> <p>3. Ուսուցանելով կարևորագույն բժիշկ-հումանիտաների Հիպոկրատի, Գալենի, Իբն Սինայի, առ-ռազիի, Մխիթար Հեթանոս, Ամիրդովլաթ Ամասիացու և ուրիշների բարոյաէթիկական սկզբունքներն նպաստով երիտասարդ բժշկի բարոյանակ կերպարի կայացմանը և կատարելագործմանը:</p>

<b>4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋԱՐՈՒՄՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է</b>			
<p><b>Իմանա</b> բժշկության անցած երկար ճանապարհը, սկսած նախնադարից մինչև մեր օրերը, հին արևելքի, անտիկ մշակույթի, արաբական աշխարհի, ինչպես նաև հայաստանի, եվրոպայի և ռուսաստանի միջնադարյան, վերածննդի, նոր և նորագույն շրջանների բժշկագիտության ձեռքբերումները:</p> <p><b>Կարողանա</b> մասնագիտական գործունեության համար օգտվել ուսումնական, գիտական, հանրամատչելի գրականությունից և համացանցից:</p>			
<b>5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>			
<ol style="list-style-type: none"> <li>Porter Roy. The Greatest benefit to Mankind. A Medical History of Humanity, New York, London, 1998</li> <li>Singer Ch., Underwood A. A short History of medicine, Oxford, 1962</li> <li>Гипократ. Избранные книги, Москва, 1936</li> <li>Иба Сина. Канон врачебной науки в 5 томах, Ташкент,</li> <li>Աբուսայիդ Յադագու կազմութեան մարդոյ, քննական բնագիրը, ռուսերեն թարգմանությունը և առաջաբանը Ս. Վարդանյանի, Երևան, 1974</li> <li>Ամիրդովլաթ Ամասիացի. Անգիտաց անպետ, խմբ. Կ. Բասմաջյանի, Վիեննա, 1926:</li> <li>Ասար Սեբաստիացի. Գիրք բժշկական արհեստի, աշխ. Դ. Կարապետյանի, Երևան, 1993:</li> <li>Բժշկության Պատմություն, դասագիրք/ Յ. Լիսիցին, Մոսկվա, 2015.</li> <li>Գրիգոր Նարեկացի. Տեսություն ի մարդոյն կազմութիւն, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Ստեյլա վարդանյանի, Էջմիածին, 2008:</li> <li>Հայաստանի Բժշկության Պատմություն, դասագիրք/ Ս. Վարդանյան, Երևան, 2000;</li> </ol>			
<b>6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ</b>			<b>ՄԻԱՎՈՐ</b>
Հաճախումներ			20
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում			70
Ինքնուրույն անհատական աշխատանք			10
<b>7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՄԱՆ /ՌԵՅՏԻՆԳՄԱՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ</b>			
Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	<b>ՖԻԶԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</b>		
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I - IV
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2018-2019		

ԿԱԶՄՈՂ	կ.գ.թ. Նորիկ Սարիբեկյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 91 61 00 15
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՅԵ	Unitradmed.info@gmail.com

ԱՄԲԻՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	«Միլենա» առողջարարական մարզադահլիճ
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	պ.գ.թ., դոցենտ Արմեն Էմիլի Խաչիկյան

**ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾԱՎԱԼԸ**

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդով.	Քննություն	Ստուգարք
I	I	-	17	2	68	34	-	-	-	-		
	II	-	17	2	68	34	-	-	-	-		
II	III	-	17	2	68	34	-	-	-	-		
	IV	-	17	2	68	34	-	-	-	-		
<b>Ընդամենը</b>		-	<b>68</b>	<b>8</b>	<b>272</b>	<b>136</b>	-	-	-	-		

- 1. ՆԱԻԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**  
-
- 2. ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
Դասընթացը կազմված է Մարմնամարզություն, Աթլետիկա և Սպորտային խաղեր բաժինները:
- 3. ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ**  
Դասընթացի նպատակն է կատարել ուսանողի ֆիզիկական զարգացմանը, ֆիզիկական պատրաստվածությանը, առողջական վիճակի պահպանմանն ուղղված տարբեր սպորտաձևերի ուսուցում, ուսանողներին սովորեցնել առողջ ապրելակերպին, նպաստել համակողմանի զարգացած մասնագետներ պատրաստելուն, հաղորդել ունակություններ ապագա աշխատանքային բնագավառում ֆիզիկական կուլտուրան և սպորտն արմատավորելու գործում:

<b>4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է</b>			
<p><b>Իմաստ</b> անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ու նշանակությունը: Ֆիզդաստիարակության և առողջ կենցաղավարության հիմունքները:</p> <p><b>Տիրապետի</b> ֆիզիկական վարժությունների կոմպլեքսի կատարմանը, որը անհրաժեշտ է նրա ամբողջ կյանքի ընթացքում և թույլ կտա բարելավվել առողջությունը, ձեռք բերել ֆիզիկական մի շարք որակներ՝ արագաշարժություն, ճկունություն, ուժ, դիմացկունություն:</p>			
<b>5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>			
1. Ա. Գրիգորյան, Ֆ. Ղազարյան, «Ճանաչիր ինքդ քեզ», Երևան, 2000			
2. Գ.Ն. Ազիզյան, Հ.Ս. Վանեսյան, «Ֆիզիկական պատրաստություն», Երևան, 2002			
3. Է.Հ. Ավագյան, «Ֆիզիկական դաստիարակություն», ուս. ձեռնարկ, Երևան, 1988			
4. Լ.Գ. Ազիզյան, «Հիմնական մարմնամարզություն կանանց համար», Երևան, 2005			
5. Կ.Պ. Աթոյան, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հնագույն ակունքները Հայաստանում», Երևան, 2005			
6. Ս. Հակոբյան, Լ. Սամվելյանս, «Ֆիզիկական կրթությունը բուհում», ուս. ձեռնարկ, Երևան, 1995			
<b>6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ</b>			<b>ՄԻԱՎՈՐ</b>
Հաճախումներ			20
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում			70
Ինքնուրույն անհատական աշխատանք			10
<b>7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ</b>			
Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	<b>ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ</b>		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիա		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I, II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2018-2019		

ԿԱԶՄՈՂ	Անահիտ Կարապետյան Ամալյա Գրիգորյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 91 61 15 00, +374 91 58 24 41
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	<a href="mailto:anahit.karapetyan.54@mail.ru">anahit.karapetyan.54@mail.ru</a> , <a href="mailto:amalya-grigoryan@mail.ru">amalya-grigoryan@mail.ru</a>

ԱՄԲԻՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	պ.գ.թ., դոցենտ Արմեն Էմիլի Խաչիկյան

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ**

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդով.	Քննություն	Ստուգարք
I	I	2	17	2	60	34	-	34	17	9		+
	II	2	17	2	60	34	-	34	17	9		+
<b>Ընդամենը</b>		<b>4</b>	<b>34</b>	<b>4</b>	<b>120</b>	<b>68</b>	<b>-</b>	<b>68</b>	<b>34</b>	<b>18</b>		

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**  
Մայրենի և օտար լեզուների քերականակ գիտելիքների իմացությունը, որը ձևավորվել է դպրոցում
- 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
Հայոց լեզվի ուսուցումն ընթանում է երկու փուլերով. «Նախնական դասընթաց» փուլը սկսվում է գրուսուցմամբ և ներառում է «Կապակցված գրավոր և բանավոր խոսք» ենթաբաժինը, Երկրորդ՝ «Հիմնական դասընթաց» փուլում լեզվական-քերականական իրողություններն ուսուցանվում են ավելի համակարգված ձևով՝ նպաստելով նախնական դասընթացում արդեն ստացած գիտելիքների խորացմանը, հաղորդակցական կարողությունների և հմտությունների զարգացմանը:
- 3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ**  
Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի այբուբենի հնչյուն-տառերը, ձևավորել կարդալու և գրելու սկզբնական կարողություններ, հետագայում բանավոր և գրավոր կապակցված խոսք կազմելուն նպաստող շարահյուսական անհրաժեշտ գիտելիքների ուսուցման համար, տեքստային աշխատանքների՝ իրադրական տեքստերի, զրույցների, երկխոսությունների միջոցով մշակել բանավոր խոսքը, աստիճանաբար զարգացնել համագործածական և բժշկագիտական բառապաշարը:

**4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԲՐՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է**

**Իմաստ** հայոց լեզվի այբուբենը, հնչյունների գրային նշանները, հաղորդակցման համար անհրաժեշտ նվազագույն բառապաշարը, հայերենի հնչյունական համակարգը, բառի տեսակներն ըստ իմաստի և ձևի, դարձվածքներ, թևավոր խոսքեր, բառի տեսակներն ըստ կազմության, հաղորդակցման համար անհրաժեշտ համագործածական բառապաշարը, թեքվող խոսքի մասերի հարացույցների գլխավոր տարրերը և չթեքվող խոսքի մասերի գործնական կիրառությունը, մասնագիտական դասընթացներին վերաբերող հիմնական եզրույթների և բառակապակցությունների հայերեն համարժեք ձևերը:

**Կարողանա** ինքնուրույն կառուցել կապակցված խոսք՝ ընկալելով հայերենի շարահյուսական կառուցվածքը, ճանաչել բառի բաղադրիչները, բանավոր խոսքում գործածել հոմանիշներ և հականիշներ, կարդալ, հասկանալ և վերարտադրել պարզագույն տեքստեր, մասնավորապես՝ մասնագիտական տեքստեր, տարբեր բնույթի գրավոր աղբյուրներում (բառարան, հանրագիտարան, մամուլ, տեղեկատուներ, համացանց և այլն) անհրաժեշտ տեղեկատվական նյութերը ձեռք բերել և դրանք նպատակադրված կիրառել:

**Տիրապետի** համապատասխան իրավիճակներում անկաշկանդ արտահայտվելու հմտությանը, նախադասությունները քերականորեն ճիշտ կառուցելու, թեմայի շուրջ երկխոսություն վարելու և ճիշտ դիմելաձևերի հմտություններին, բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատու գրականությունից, տպագիր և ժամանակակից տեղեկատվական այլ աղբյուրներից օգտվելու կարողությանը:

**5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Ա.Ավետիսյան, «Պատկերագրող հայոց լեզու. անգլախոս ուսանողների ուսուցման սկզբնափուլ», դասագիրք, Երևան, 2004թ.:
2. Լ.Կ.Մուրադյան, «Սովորում ենք գրել, կարդալ, խոսել հայերեն», ձեռնարկ անգլախոս արտասահմանցիների համար, Երևան, 2011թ. :
3. A. V. Gevorgian, East Armenian Course, Yerevan, 2000:
4. Ա. Շ. Ավետիսյան, «Հայոց լեզու» (ձեռնարկ անգլախոս ուսանողների համար), Տեքստեր և վարժություններ, Երևան, 2004թ.:

**6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ**

Հաճախումներ	20
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	10

**7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՍՅՒՆ /ՌԵՅՏԻՆԳՍԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ**

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F



ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	<b>ԼԱՏԻՆԵՐԵՆ</b>		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Բուժական գործ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Բուժական		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I, II
ՈւՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2018-2019		

ԿԱԶՄՈՂ	Վիկտորյա Թումանյան (արտ. շահակից), Ժաննա Հակոբյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 91 80 06 13, +374 77 04 19 74
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՅԵ	<a href="mailto:vdoxoyan75@mail.ru">vdoxoyan75@mail.ru</a> , zhanna.mousisyan@mail.ru

ԱՄԲԻՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	պ.գ.թ., դոցենտ Արմեն Էմիլի Խաչիկյան

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ**

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդով.	Քննություն	Ստուգարք
I	I	2	17	2	60	34	-	34	17	9		+
	II	2	17	2	60	34	-	34	17	9		+
<b>Ընդամենը</b>		<b>4</b>	<b>34</b>	<b>4</b>	<b>120</b>	<b>68</b>	<b>-</b>	<b>68</b>	<b>34</b>	<b>18</b>		

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**  
Դասընթացի յուրացման համար որպես հիմք անհրաժեշտ է անգլերեն լեզվի բավարար գիտելիքներ, որոնք ձևավորվել են դպրոցում:
- 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
Դասընթացը ընդգրկում է անատոմիական, հյուսվածաբանական, դեղագիտական, ախտաբանական և կլինիկական տերմինների ուսուցումը: Դասընթացը հնարավորություն կտա արտասահմանցի ուսանողներին ծանոթանալ անատոմիայում կիրառվող ակտիվ բառապաշարին, ինչպես նաև հունարեն և լատիներեն բիլինգվալ հիմքի վրա ձևավորված ախտաբանական և կլինիկական տերմիններին, որոնք նպաստում են ուսանողների մնացորդային գիտելիքների ձեռք բերմանը, որը հետագայում հնարավորություն է տալիս հմտորեն ծանոթանալ օտարալեզու բժշկական գրականությանը, քանի որ գրեթե ամբողջ եվրոպական/ բացառությամբ գերմաներենի, որոնք առաջնահերթությունը տալիս են սեփական լեզվով ձևավորված տերմիններին, նոր հետո միջազգային/ և արևմտյան բժշկական գրականությունը կիրառում է միմիայն հունա- լատինական տերմիններ:
- 3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.**
  - 3.1. Դասընթացի նպատակը**  
Ուսուցանել հունալատինական անատոմիական, կլինիկական և դեղագիտական, բժշկական տերմինները:

**3.2. Դասընթացի խնդիրները**

- Ծանոթացնել բժշկական տերմինների բառակազմության բովանդակությանը:
- Ձևավորել կարդալու, գրելու կարողությունները:
- Ուսուցանել նոր բառապաշար՝ հետագայում նեղ մասնագիտական նոր տերմիններ կազմելու համար:

**4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է**

**Իմանա** ինչպես լատիներեն լեզվին հատուկ հնչյունական կանոններով արտասանել տարբեր տառակապակցություններ, բժշկական լատիներենի ուղղագրական կանոնները, լատիներեն և հունարեն նախածանցներն ու վերջածանցները, լատիներեն լեզվով քիմիական անվանակարգությունները և նրանց կիրառումը քիմիական նյութերի մեջ, դեղատոմսի կրճատման կանոնները:

**Կարողանա** որոշել լատիներենի գոյականի ճիշտ սեռը, թիվը, հոլովումը, հոլովը և համապատասխան ածականով լրացնի անհրաժեշտ ցանկացած բարդության բժշկական տերմին, կազմել դեղատոմսեր ըստ միջազգային ընդունված կանոնակարգի, թարգմանել և կազմել տարբեր բժշկական տերմիններ:

**Տիրապետի** տերմիններ օգտագործելուն անատոմիական և ախտաբանական ոլորտում:

**5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. V.M. Balabanyan, N.S. Stepanyan, Latin Terminology for Medical Students, Yerevan, 2008.

**6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ**

**ՄԻԱՎՈՐ**

Հաճախումներ	20
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	10

**7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ**

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	<b>ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹՅՈՒՆ</b>		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Բուժական գործ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Բուժական		
ԿՈՒՐՍ	II	ԿԻՍԱՄՅԱԿ	IV
Ուսումնական տարի	2018-2019		

ԿԱԶՄՈՂ	Հայարփի Սահակյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 94 69 24 64
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՅԵ	<a href="mailto:hayarpisahakyan@yandex.ru">hayarpisahakyan@yandex.ru</a>

ԱՄԲԻՈՆ	Հումանիտար առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	պ.գ.թ., դոցենտ Արմեն Էմիլի Խաչիկյան

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ**

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդով.	Քննութ. ժամ	Ստուգարք
II	IV	3	17	3	90	51	34	17	25	14		+
<b>Ընդամենը</b>		<b>3</b>	<b>17</b>	<b>3</b>	<b>90</b>	<b>51</b>	<b>34</b>	<b>17</b>	<b>25</b>	<b>14</b>		

1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝
  - Պատմություն
2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
 

«Փիլիսոփայություն» դասընթացը ուսումնասիրում է փիլիսոփայական գիտելիքի առանձնահատկությունները, փիլիսոփայության գլխավոր խնդիրը, զարգացման փուլերը, հիմնական բաժինների գլխավոր խնդիրները, վերջիններիս վերաբերյալ հիմնական տեսակետները:
3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.
  - 3.1. Դասընթացի նպատակը
 

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել մշակույթում փիլիսոփայության ունեցած դերին, զարգաման պատմական փուլերին, փիլիսոփայական գլխավոր խնդիրների շուրջ առաջադրված հիմնական տեսակետներին:
  - 3.2. Դասընթացի խնդիրները
    - Գոյության, իմացության, մեթոդի, գիտական և ոչ գիտական գիտելիքի դեմարկացիան:
    - Հսարակական, իրավական, քաղաքական, տնտեսական ոլորտների ունիվերսալ և փոխկապակցված հիմնախնդիրները բարելավել կարողալու հմտությունը,
    - զործնականում ամրապնդել լեզվի քերականության իմացությունը:

**4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է**

**Իմաստ** փիլիսոփայականի և ոչ փիլիսոփայականի հիմնական տարբերությունները, փիլիսոփայական, գիտական և կենցաղային գիտելիքների հիմնական առանձնահատկությունները, փիլիսոփայության պրոբլեմատիկան՝ պատմական և տրամաբանական համատեքստերում:

**Կարողանա** լինել օբյեկտիվ և անաչառ, եթե առկա կամային գործոնը, փիլիսոփայական յուրահատուկ գիտելիքները կիրառել մասնագիտական ոլորտում, մասնագիտական բարդ-լուծելի խնդիրներին բախվելիս՝ փիլիսոփայական մոտեցումներ կիրառել, միշտ վերահաստատել, որ մարդն է բարձրագույն արժեքն ամեն ոլորտում և պարագայում:

**Տիրապետի** վերլուծելու, ընդհանրացնելու, քննադատելու ճշգրիտ մեթոդներին, գիտելիքի տարբերակման և արժեքավորման ձևերին, էքզիստենցյալ իրողությունների թիրախային գնահատմանը և խնդիրների լուծման, դրանց մոտեցումների հիմնական ձևերին:

**5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. 12 Modern Philosophers, Edited by Christopher Belshaw and Gary Kemp, Blackwell Publishing 2009
2. by Oxford University Press Inc., New York, 2002
3. **Edward Craig**, Philosophy: A Very Short Introduction, Published in the United States
4. **Evans G.** “A brief history of heresy”, Blackwell Publishing, 2003
5. **Fisher A.**, Metaethics An Introduction, Printed and bound in the UK by MPG Books Group, Acumen, 2011
6. **Haldane J.J., Smart J. C.**, Atheism and Theism Second Edition, United Kingdom, Blackwell Publishing 1996, 2003
7. **Hebblethwaite B.**, “Philosophical Theology and Christian Doctrine”, Blackwell Publishing, 2005
8. Internet Encyclopedia of Philosophy, <http://www.iep.utm.edu>
9. **Kenny A.** , “An illustrated brief history of western philosophy”, Blackwell Publishing, 2006
10. **Solomon R.C., Higgins K.M.**, The Big Questions. A Short Introduction to Philosophy. Ninth Edition, Wadsworth, Cengage Learning, 2014
11. Չաքարյան Ս., Փիլիսոփայության պատմություն, Երևան, 2000
12. Միրումյան Կ., Անտիկ փիլիսոփայության ակնարկ, Երևան, 1999

**6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ**

**ՄԻԱՎՈՐ**

Հաճախումներ	20
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	10

**7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՆԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ**

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	<b>ԲԺՇԿԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ</b>		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիական		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիա		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2018-2019		

ԿԱԶՄՈՂ	Ֆիզ. մաթ. գ. թ., Արմեն Գրիգորյան Գրետա Ուլիխանյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 55 31 35 45, +374 10 64 87 80
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	<a href="mailto:armeng9@gmail.com">armeng9@gmail.com</a> , <a href="mailto:gretau7@mail.ru">gretau7@mail.ru</a>

ԱՄԲԻՈՆ	Բնագիտական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	Կ.գ.թ., Հ. Գ. Ջավրուշյան

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ**

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթավ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդատվ.	Քննություն	Մտուցաբք
I	II	3	17	3	90	51	24	27	25	14		+
<b>Ընդամենը</b>		<b>3</b>	<b>17</b>	<b>3</b>	<b>90</b>	<b>51</b>	<b>24</b>	<b>27</b>	<b>25</b>	<b>14</b>		

- 1. ՆԱԻԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է**  
Մաթեմատիկա, Ֆիզիկա, Կենսաբանություն
- 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
«Բժշկական ֆիզիկա» դասընթացը միտված է բժշկ-ուսանողների մոտ ձևավորել համակարգված գիտելիքներ կենսաբանական համակարգերի ֆիզիկական հատկությունների, դրանցում ընթացող ֆիզիկական պրոցեսների մասին, որոնք անհրաժեշտ են այլ կրթական ծրագրերի յուրացման ինչպես նաև բուժական գործ մասնագիտությամբ մասնագետների պատրաստման համար:
- 3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ**  
Մասնագիտական կրթության ասպարեզում «Բժշկական ֆիզիկա» դասընթացի դասավանդումն նպատակ ունի ուսանողներին ծանոթացնել բնության և կենսաբանական համակարգերի մեջ տեղի ունեցող ֆիզիկական երևույթներին, դրանց հիմնական հատկություններին և օրինաչափություններին, ինչպես նաև հիմնարար օրենքներին, ուսուցանել ֆիզիկական մեթոդների կիրառությունը տարբեր տեսակի մասնագիտական և սոցիալական գործունեություններում, ուսանողների մեջ ձևավորել ֆիզիկական և վերլուծական մտածողություն:
- 4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է**  
**Իմանա** ֆիզիկայի հիմնական օրենքները, մարդու օրգանիզմում և բնության մեջ տեղի ունեցող գործընթացների հիմքում ընկած ֆիզիկական երևույթները և օրինաչափությունները, տրամաբանական խնդիրների լուծման ֆիզիկական և մաթեմատիկական մեթոդները և դրանց կիրառումը բժշկության մեջ, բժշկական սարքավորումների աշխատանքի ֆիզիկական հիմքերը, բժշկական սարքավորումների կառուցվածքը և նշանակությունը, անվտանգության տեխնիկայի և ֆիզիկայի լաբորատորիայում սարքերի և ռեակտիվների հետ աշխատանքի օրենքները:

**Կարողանա** կանխատեսել ֆիզիկական փոխազդեցության ընթացքը և արդյունքները մարդու օրգանիզմի վրա, օգտվել ֆիզիկական սարքավորումներից, կատարել փորձարարական արդյունքների մշակում, տարրական վիճակագրական տվյալների մշակում, օգտագործել կրթական, գիտական և գիտահանրամատչելի գրականություն, ինտերնետային ցանցը մասնագիտական գործունեության համար:

**Տիրապետի** տեսական գիտելիքների օգտագործման հմտությանը կենդանի օրգանիզմների վրա ֆիզիկական ազդեցության առանձնահատկությունները մեկնաբանելու համար, տեղեկատվության ձևափոխման բազային տեխնոլոգիաներին՝ տեքստային, աղյուսակային, համացանցային փնտրում, իրավասության սահմանափակության հասկացությանը:

**5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Ulrich Zürcher Algebra-Based College Physics: Part I Mechanics to Thermal Physics. 1 edition © 2013 Ulrich Zürcher & bookboon.com SBN: 978-87-403-0425-1
2. Ulrich Zürcher Algebra-Based College Physics: Part II Electricity to Nuclear Physics 1st edition © 2013 Ulrich Zürcher & bookboon.com ISBN 978-87-403-0426-8.
3. Prof. Satindar Bhagat Elementary Physics I Kinematics, Dynamics And Thermodynamics. 2013 Prof. Satindar Bhagat & bookboon.com ISBN 978-87-403-0632-3.
4. Prof. Satindar Bhagat Elementary Physics II Oscillations, Waves: Sound and Electromagnetic/Light. 2013 Prof. Satindar Bhagat & bookboon.com ISBN 978-87-403-0823-5.
5. Daniel Gebreselasie Mechanics and Oscillations University Physics I: Notes and exercises. 1st edition © 2015 Daniel Gebreselasie & bookboon.com ISBN 978-87-403-0995-9.
6. Daniel Gebreselasie Electricity, Magnetism, Optics and Modern Physics College Physics II: Notes and exercises. 1st edition © 2015 Daniel Gebreselasie & bookboon.com ISBN 978-87-403-1056-6.
7. Վ. Բարխուդարյան, Մոլեկուլային ֆիզիկա, Ուս. ձեռնարկ: 2-րդ վերամշակված հրատարակություն: Երևան, ԵՊՀ հրատ., 2014, 332 էջ:
8. Աթայան Կ. Ի. Ֆիզիկան և շրջակա միջավայրը Ուս. ձեռնարկ, ԵՊՀ հրատ. 2012, 216 էջ
9. Մ. Գ. Աբրահամյան Մեխանիկայի ֆիզիկական հիմունքները Երևան, ԵՊՀ հրատ., 1997, 368 էջ
10. <http://www.physicsclassroom.com/>

**6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ**

Ճաճախումներ	20
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	10

**7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ**

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	<b>ԲՈՒՅՍԵՐԻ ՄՈՐՖՈԼՈԳԻԱ ԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ</b>		
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիական		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիա		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	I
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2018-2019		

ԿԱԶՄՈՂ	Կ.Գ.Թ. Նորիկ Սարիբեկյան Ղուկասյան Նելլի
ՀԵՌԱԽՈՍ	+374 55 49 41 49
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	nellka2011@gmail.com

ԱՄԲԻՈՆ	Բնագիտական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	Կ.Գ.Թ., Հ.Գ.Ջավրուշյան

**ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾԱՎԱԼԸ**

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասակի. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդատվ.	Քննություն	Ստուգարք
I	I	2	17	2	60	34	18	16	17	9		+
<b>Ընդամենը</b>		<b>2</b>	<b>17</b>	<b>2</b>	<b>60</b>	<b>34</b>	<b>18</b>	<b>16</b>	<b>17</b>	<b>9</b>		

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**  
Դասընթացը կառուցված է կենսաբանություն, լատիներեն, բուսաբանություն առարկաների իմացության վրա:
- 2. ԴԱՍԸՆԹԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
«Դեղաբույսերի մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա» դասընթացը գիտություն է բույսերի մասին. ուսումնասիրում է նրանց արտաքին և ներքին կառուցվածքը, զարգացման օրինաչափությունները և տարածվածությունը երկրագնդի վրա: Այն բժշկական կրթության համար հանդիսանում է ընդհանուր տեսական հիմնարար գիտություն: Այն անհրաժեշտ է հիմնական առարկայի՝ ֆարմակոգնոզիայի տարրերը յուրացնելու, ինչպես նաև ընդհանուր կենսաբանական գիտելիքներով ապահովելու նպատակով: Բուսաբանական գիտելիքները, միաժամանակ, անհրաժեշտ են մի շարք բժշկագիտական դասընթացների յուրացման համար՝ բժշկական կենսաբանություն, մանրէաբանություն, կենսաքիմիա, լատիներեն, ֆարմակոգնոզիա, դեղաբանություն:
- 3. ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ**  
Դասընթացի ուսումնասիրությունը ուսանողների մոտ զարգացնում է հետաքրքրասիրություն մասնագիտության հանդեպ, օգնում է հասկանալ բնության պահպանության անհրաժեշտությունը, բուսական պաշարների ճիշտ օգտագործումը:
- 4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԲՆՈՒՄՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է**  
**Իմանա** բուսական բջջի կառուցվածքի առանձնահատկությունները, պարունակվող նյութերը, բուսական հյուսվածքների կառուցվածքը, դերը, տիպերը, վեգետատիվ և գեներատիվ օրգանների անատոմիական և մորֆոլոգիական կառուցվածքները, նրանց բնորոշ հատկանիշները, բույսերի բազմացման տիպերը, զարգացման օրինաչափությունները:

**Կարողանա** պատրաստել ժամանակավոր մանրապատրաստուկներ, մանրադիտակի օգնությամբ վերլուծել ժամանակավոր և մշտական մանրապատրաստուկների պատկերները, կարողանալ առանձնացնել տարբերակիչ հատկանիշները, կատարել հետևություններ, աշխատանքի արդյունքները գրանցել և նկարել տետրերում:

**Տիրապետի** տեսական և գործնական խորը գիտելիքների՝ կապված մասնագիտության հետ, ուսումնական, գիտական, նորմատիվ և տեղեկագրական գրականությամբ, այլ աղբյուրներով ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությամբ:

**5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Դումանյան Կ.Հ., Մելիքյան Ե.Ա. Բուսաբանություն, Երևան, 2011, 348էջ
2. Kingsley R., James E., Shelley H. Plant Biology; Edition Eleven, 616 p., 2008.

**6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ**

	ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ	20
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	10

**7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ**

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F



ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	<b>ԴԵՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ</b>		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիական		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիա		
ԿՈՒՐՍ	III	ԿԻՍԱՄՅԱԿ	V, VI
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2018-2019		

ԿԱԶՄՈՂ	Ղուկասյան Նելլի
ՀԵՌԱԽՈՍ	+374 55 49 41 49
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	nellka2011@gmail.com

ԱՄԲՈՆ	Բնագիտական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲՈՆԻ ՎԱՐԻՉ	Կ.Գ.Թ., Հ. Գ. Ջալրուշյան

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ**

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդատվ.	Քննություն	Ստուգալիք
III	IV	3	17	3	90	51	16	35	26	13		+
	V	3	17	3	90	51	16	35	25	14	+	
<b>Ընդամենը</b>		<b>6</b>	<b>34</b>	<b>6</b>	<b>180</b>	<b>102</b>	<b>32</b>	<b>70</b>	<b>51</b>	<b>27</b>		

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**  
Մարդու անատոմիա, Լատիներեն, Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունաբանություն, Նորմալ ֆիզիոլոգիա, Կենսաքիմիա
- 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
«Դեղաբանություն» դասընթացը ապահովում է դեղաբանական միջոցների հիմնական խմբի կլինիկական դեղաբանական բնութագրի իմացություն և անհետաձգելի իրավիճակների ու հիմնական ախտաբանական համախտանիշների դեպքում որոշակի դեղաբանական միջոցների ուսուցանող ընտրության վերաբերյալ գիտելիքներ հաշվի առնելով հակադոպինգային օրենսդրությունը:
- 3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ**  
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ տարբեր հիվանդությունների և ախտաբանական վիճակների կանխարգելման և բուժման նպատակով օգտագործվող դեղամիջոցների ազդեցության մասին, դեղորայքների ցուցումների, հակացուցումների և դրանց հնարավոր կողմնակի ազդեցությունների մասին, սովորեցնել դեղատոմսերում դեղամիջոցների դուրս գրման ճիշտ ձևերը:

**4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԴՐՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է**

**Իմանա** դեղաբանական միջոցների դասակարգումն ու հիմնական բնութագիրը, ֆարմակոդինամիկան և ֆարմակոկինետիկան, կիրառման ցուցումները, հակացուցումներն ու կողմնակի ազդեցությունները, դեղաբանական միջոցների դեղատոմսերի ձևավորման և դեղատոմսային նշանակման կազմման ընդհանուր սկզբունքները, կենսաբանական և բժշկական համակարգերում տեղեկատվության հավաքման, պահպանման, որոնման, վերամշակման, վերափոխման, տարածման տեսական հիմունքները, տեղեկատվական համակարգչային համակարգերի կիրառումը բժշկության և առողջապահության մեջ:

**Կարողանա** վերլուծել ընդհանուր ախտաբանության հարցերն ու բժշկական ժամանակակից տեսական հայեցակարգերն ու ուղղությունները, մասնագիտական գործունեության ծավալման նպատակով ուսումնական, գիտական գրականությունից, համացանցից օգտվել, վերլուծել դեղաբանական միջոցների ազդեցությունը և թերապևտիկ բուժման համար նրանց կիրառման հնարավորությունները ելնելով նրանց դեղաբանական հատկություններից, դուրս գրել դեղատոմսեր, կիրառել դեղաբանական միջոցների տարբեր դեղաբանական ձևեր որոշակի ախտաբանական վիճակների դեպքում, ելնելով նրանց ֆարմակոդինամիկ և ֆարմակոկինետիկ առանձնահատկություններից, գնահատել դեղաբանական միջոցների գերդոզավորման դեպքում հնարավոր անցանկալի երևույթները և նրանց վերացման ուղիները: հիմնավորել առավել տարածված հիվանդությունների ախտաբանական թերապիայի սկզբունքները:

**Տիրապետի** տարբեր հիվանդությունների և ախտաբանական վիճակների բուժման, վերականգնման և կանխարգելման համար դեղաբանական միջոցների կիրառման ունակություններին, առաջին բուժօգնության, անհապաղ ու կյանքին վտանգ սպառնացող իմունային խանգարումներով ուղեկցվող իրավիճակների ժամանակ ցուցաբերվող ախտորոշիչ և բուժիչ միջոցառումների հիմունքներին:

**5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. K. Whalen, Lippincott Illustrated Reviews, Pharmacology, Piladelphia, 2011.
2. Справочник Видаль. Лекарственные препараты в России. Астра-Фарм-Сервис. М. 2009.
3. Харкевич Д.А. Фармакология: учеб. – М.: ГЭОТАР-МЕД, 2010.

**6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ**

**ՄԻԱՎՈՐ**

Հաճախումներ	20
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	10

**7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ /ՌԵՅՏԻՆԳԱՅԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ**

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	<b>ՖԱՐՄԱԿԱԳՆՈԶԻԱ</b>		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիական		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիա		
ԿՈՒՐՍ	II	ԿԻՍԱՄՅԱԿ	III
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2018-2019		

ԿԱԶՄՈՂ	Նելլի Ղուկասյան
ՀԵՌԱԽՈՍ	+37 55 49 41 49
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	nellka2011@gmail.com

ԱՄԲՈՆ	Բնագիտական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	
ԱՄԲՈՆՆԻ ՎԱՐԻՉ	կ.գ.թ., Շ. Գ. Ջավրուշյան

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ**

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդատվ.	Քննություն	Ստուգարք
<b>II</b>	<b>III</b>	2	17	2	60	34	18	16	17	9		+
<b>Ընդամենը</b>		<b>2</b>	<b>17</b>	<b>2</b>	<b>60</b>	<b>34</b>	<b>18</b>	<b>16</b>	<b>17</b>	<b>9</b>		

**1. ՆԱԻԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**  
Դեղաբույսերի մորֆոլոգիա և ֆիզիոլոգիա

**2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
Ֆարմակոգնոզիա առարկան ուսումնասիրում է դեղաբույսերը, դեղաբուսական հումքերն ու բուսական և կենդանական ծագման որոշ արգասիքները, բուսական դեղապատրաստուկների աճող պահանջարկն ու էկոլոգիական իրավիճակի խորացումը պահանջում են դեղաբույսերի և նրանցից բարձրորակ դեղաբուսական հումքերի պաշարների ռացիոնալ օգտագործման ոլորտում կոմպլեքս տնտեսա-մասնագետների նախապատրաստումը: Այն տալիս է պրակտիկ գործունեությանն անհրաժեշտ գիտելիքներ, այն է՝ գտնել և ճանաչել դեղաբույսերը բնության մեջ, իմանալ ռացիոնալ հավաքի ձևերն ու ժամանակահատվածը, չորացման պայմանները, պահպանման և վերլուծության եղանակները՝ օգտագործելով ֆարմակոգնոստիկ վերլուծության զանազան մեթոդներ:

**3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ**  
Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ֆարմակոգնոզիայի ընդհանուր և մասնավոր բաժինների վերաբերյալ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումը, որի հիմքում ընկած է դեղաբուսական հումքերի ռացիոնալ օգտագործման խնդիրները՝ հաշվի առնելով մթերման, ստանդարտավորման, որակի հսկման, պահպանման և վերամշակման, ինչպես նաև հումքի և դեղաբուսական պրեպարատների՝ դեղագործական պրակտիկայում օգտագործման գիտականորեն հիմնավորված խորհուրդները:

**4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԲՆՈՒՄՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է՝**  
**Իմանա** դեղաբույսերի և դեղաբուսական հումքի հետ աշխատանքի ընթացքում անվտանգության կանոնները, դեղաբույսերի և դեղաբուսական հումքերի լատինական անվանումները, ֆարմակոգնոստիկ վերլուծության նպատակով տարբեր ձևաբանական խմբերին պատկանող մանրեցված դեղահումքերից /կտրտված տերևների, խոտերի, ծաղիկների, պտուղների, կեղևների, կոճղարմատների և արմատների/ մանրապատրաստուկների պատրաստման տեխնիկան, դեղաբուսական հումքերի

մակրոսկոպիկ /արտաքինտեսք, գույն, հոտ, համ/ և մանրադիտակային /անատոմիական - տարբերակիչ/ առանձնահատկությունները և դիտարկման մեթոդները, դեղաբուսական հումքերի դասակարգումը, բնութագիրը, քիմիական կազմը և կիրառումը, դեղաբուսական հումքերի մթերման հիմունքները/ հավաք, նախնական մշակում, չորացում, պահեստավորում/:

**Կարողանա** ճանաչել հերբարիզացված դեղաբույսերն ըստ ձևաբանական հատկանիշների, տարբերակել տարբեր ձևաբանական խմբերին պատկանող մանրեցված դեղահումքերը /կտրտվածտերևներ, խոտեր, ծաղիկներ, պտուղներ, սերմեր, կեղևներ, կոճղարմատներևարմատներ/, համապատասխան որոշիչների օգնությամբ որոշել դեղաբույսերը, ամբողջական և մանրեցված դեղաբուսական հումքերը, կատարել դեղաբուսական հումքի ֆարմակոգնոստիկ անալիզ, դեղաբուսական հումքի դեղաբանական խումբը բնորոշող ազդող նյութերի /տերպենոիդներ, գլիկոզիդներ, վիտամիններ/ և տարբերակիչ նշանակություն ունեցող ուղեկցող և բալաստային նյութերի հայտնաբերման փորձարարական հետազոտություններ, տարբերակել դեղաբույսերի և դեղաբուսական հումքերի թույլատրելի և անթույլատրելի խառնուրդները, կազմակերպել և իրականացնել դեղաբուսականհումքի մթերում /դեղաբուսական հումքի հավաք, նախնական մշակում, չորացում/ և դեղաբուսական հումքի պահեստավորման հետ կապված բոլոր գործառնությունները, մասնակցել դեղագիտության ոլորտում կատարվող գիտական հետազոտություններին:

**Տիրապետի** որակական և միկրոքիմիական ռեակցիաներ իրականացնելուն՝ հիմնվելով դեղաբուսահումքում պարունակվող կենսաբանորեն ակտիվ նյութերի վրա, դեղաբուսահումքի վերլուծության համապատասխան քրոմատագրման մեթոդներ՝ ընտրմանը, խոնավության, մոխրի, էքստրահվող նյութերի որոշման իրականացմանը՝ համաձայն պետական ֆարմակոպեայի, վիճակագրական վերամշակման իրականացման և ֆարմակոգնոստիկ վերլուծության արդյունքների ձևավորման:

**5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. A.L.”Pharmacognosy” handbook 2007
2. Д.А. Муравьева, И.А. Самылина, Г.П. Яковлев “ Фармакогнозия” 2011

**6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ**

	ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ	20
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70
Ինքնուրույն անհատական աշխատանք	10

**7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՍՅՒՆ /ՌԵՅՏԻՆԳՍԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ**

Գնահատականները	Ռեյտինգային միավորը	Թվանշանը	Տառային նշանակումը
Գերազանց	96-100	4,0	A+
	90-95	4,0	A
	87-89	3,7	A-
Լավ	80-86	3,3	B+
	76-79	3,0	B
	71-75	2,7	B-
Բավարար	66-70	2,3	C+
	63-65	2,0	C
	58-62	1,7	C-
Անբավարար	57 և ցածր	0	D
Ստուգված	>58	-	S
Չստուգված	<57	-	U
Չի ներկայացել	0	-	F

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	<b>ԿԵՆՍԱՕՐԳԱՆԱԿԱՆ ՔԻՄԻԱ</b>		
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	Պարտադիր		
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԱՆԸՆԴՀԱՏ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ		
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	Առկա		
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Ստոմատոլոգիական		
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Ստոմատոլոգիա		
ԿՈՒՐՍ	I	ԿԻՍԱՄՅԱԿ	II
ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	2018-2019		

ԿԱԶՄՈՂ	ք.գ.թ. Մարգարիտա Հովհաննիսյան
ՀԵՌԱԽՈՍ	+374 94 15 49 79
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ	<a href="mailto:mar.yan.00@mail.ru">mar.yan.00@mail.ru</a>

ԱՄԲՈՆ	Բնագիտական առարկաների
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	-
ԱՄԲՈՆՆԻ ՎԱՐԻՉ	կ.գ.թ., Շ. Գ. Ջավրուշյան

**ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՎԱԼԸ**

Կուրս	Կիսամյակ	Կրեդիտ	Ուսումն. շաբաթ	Շաբաթակ. ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. լս. ժամ	Դասակի. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասախոսի խորհրդատվ.	Քննություն	Ստուգարք
I	II	3	17	3	90	51	26	25	26	13	+	
<b>Ընդամենը</b>		<b>3</b>	<b>17</b>	<b>3</b>	<b>90</b>	<b>51</b>	<b>26</b>	<b>25</b>	<b>26</b>	<b>13</b>		

- 1. ՆԱԽԱՊԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ է՝**  
Դպրոցական, ինչպես նաև I կիսամյակում ձեռք բերած գիտելիքները, որպես բազային գիտելիք օրգանական քիմիա առարկայից կիրառվում են որպես հիմք կենսաօրգանական քիմիայում:
- 2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**  
«Կենսաօրգանական քիմիա» դասընթացը ներառում է օրգանական միացությունների կենսաբանական կարևոր դասերի և կենսա-պոլիմերների քիմիական հատկությունների վերաբերյալ գիտելիքներ, որոնք հիմք կհանդիսանան կենդանի օրգանիզմներում մոլեկուլային մակարդակի վրա տեղի ունեցող պրոցեսներն ուսումնասիրելու համար:
- 3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ**  
Դասընթացի նպատակն է ուսուցանել օրգանական միացությունների կենսաբանական կարևոր դասերի և կենսապոլիմերների քիմիական հատկությունների վերաբերյալ գիտելիքներ, որոնք հիմք կհանդիսանան կենդանի օրգանիզմներում մոլեկուլային մակարդակի վրա տեղի ունեցող պրոցեսներն ուսումնասիրելու համար:

**4. ԳՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է**

